



# Զապել Եսայան

## Հոգիս արտորեալ

Այսօր վերադարձայ Կ. Պոլիս: Գարուն է եւ Ապրիլի գիշերը իր տենդագին եւ բուրումնաւէտ մթնոլորտով ինձ կը յուզէ քաղցրը խոովքով: Պաղլար պաշիի իմ՝ հօրենական տան մէջ որ ամայացած է գրեթէ, մինակս կեցած բաց պատուհանին առաջ, երկար ժամանակէ ի վեր կը մտածեմ: Մտածել չէ ասիկա անշուշտ եւ ոչ ալ երագել. այլ հոգիս բացած անկայուն եւ անսահմանելի յուզմունքի մը՝ յամրաբար կը տոգորուիմ բնութեան գեղեցկութիւնով եւ աստիճանաբար հաղորդակցութեան կը մտնեմ անոր հետ:

Ոչ մութ է եւ ոչ լոյս, այլ աստղային ճերմակ եւ փալփլուն սարսուռ մը լոյսի, որ ամէն ինչ, նոյն իսկ հեռաւոր լեռնաշղթային գիծը, կը դարձնէ յեղեղուկ. կայծկլտումներ կը վառին ու կը մարին անընդհատ հովիտին մէջ, ուր բեղմնաւորման երկունքով դրդուած հողը խոնաւ եւ պարարտ բուրում մը կ'արտաշնչէ: Գաղջ հովի ալիքներ կ'անցնին օդին մէջէն առանց տակաւին խառնուելու երեկոյեան գովութեան եւ գայն բարեխառնելու, ու այդ է անշուշտ պատճառը որ հակառակ տենդոտ ջերմութեան որով ճակատս կ'այրի, յանկարծական ցրտութիւններ գիս կը դողացնեն:

Նոր բացուող ծաղիկ մը կը բուրէ, աստղ մը կ'անցնի երկնքին վրայէն լուսեղէն ակօս մը գծելով ու գորտերը կը կրկոսան բանջարանոցներու աւազաններուն մէջ, երկար, յամառ ու միօրինակ ձայնով:

Ինչքա՛ն թափանցող յուզիչ եւ խոր է այդ յարատեւ երգը գորտերուն, որ ինձ կը յիշեցնէ ուրիշ զարուաններ եւ զարմանալի ուժով մը հայրենաբաղձ տխրութիւն յառաջ կը բերէ իմ մէջս... Կուգեմ այլ եւս պատկիլ ու հանգստանալ ու մտածել վաղուան գործերուս մասին, բայց այդ խոնարհ կենդանիներու զարմանային եւ սիրաբաղձ երգը զիս կը կաշկանդէ. կարծես տակաւին հեռու եմ Պօլսէն ու Սկիւտարի իմ հօրենական տունէս, կարծես յիշողութեամբ միայն կը լսեմ այս կրկնոցը ու գորովագին յուզում մը հոգիս զգայուն կը դարձնէ:

Իմ յիշողութեանս անկիւններուն մէջ, փակուած դռներ կը բացուին ու անցեալ ժամեր կը վերագարթնուն: Խօսք մը, մոռցուած շարժում մը, հօրս մէկ ականարկը ու նոյն իսկ առօրեայ կեանքի մանրամասնութիւններ, որոնք վաղուց անցեր ու մոռցուեր են, վերստին կեանք կ'առնեն եւ ոչ թէ կ'անցնին յիշողութեանս մէջէն, այլ վերստին ինձ կ'ընծայեն իրենց մէջ բովանդակած տխրութիւնը կամ ուրախութիւնը:

Երկար, երկար, կարծես շնչատ հապճեպով նոյնաշեշտ նօթերու շարք մըն է, որ կ'սպառի աւելի բարձր կամ աւելի մեղմ՝ շեշտերու շարքի մը մէջ ու այսպէս անվերջ... անվերջ...

Այսու ամենայնիւ պէտք է փակեմ՝ պատուիս եւ հանգստանամ. վաղը ամբողջ օրը պէտք է զբաղուիմ մաքսատան մէջ, իմ պատկերներս խլելու պաշտօնեաներու ձեռքէն:

Այդ երկիւղալի գործողութիւնը կատարուեցաւ այնպիսի դիւրութեամբ մը որուն չէի սպասեր բնաւ, ամէն ինչ ստացայ առանց քննութեան: Սահմանադրական Թուրքիան մասնաւոր եւ սիրալիր բարեացակամութիւն ունի մեզ նկատմամբ: Ջարմանալի կերպով անակնկալ կացութիւններու երկիր մըն է այս երկիրը ու կարծես թէ մէկ վիճակէն միւր փոխանցման շրջան չի կայ կամ շատ լաւ, կամ շատ գէշ:

Պատկերներս դրեր եմ արդէն մեծ սրահին պատերուն վրայ, որ մեծ հայրս, տաղանդաւոր որմնանկարիչ, օթօման ոճով զարդարած է: Այդ մանուածապատ գիծերու ճարտարութիւնը ծածկուած է այժմ նկարներու խիտ շրջանակներուն ներքեւ:

Ամբողջ օրեր փակուած կը մնամ այդ սրահին մէջ ու կը նայիմ երբեմն քննադատի խիստ աչքով, երբեմն յուսահատելով եւ երբեմն ալ հիանալով: Ես ուրիշ բան ընել կուզէի եւ ուրիշ բան կար անշուշտ իմ հոգոյս մէջ: Իմ մէջ կար լոյս, գուարթութիւն ու կեանք, այլ սակայն իմ բոլոր պատկերներս քողարկուած են մշուշով: Իմ հայրենի լուսափառ երկրին արեւը չէ ծագած տակաւին այն գործերուն մէջ որ արտադրեր են, բայց եւ կ'զգամ որ գալիք գործերու մէջ այդ մշուշը պիտի փարատի ու իմ արեւս պիտի ծագի:

Դժուար է բացատրել այն մտորումները, որոնցմէ անցեր են եւ յանգեր այս հետեւեանքին: Կարծես իմ կարօտս ու իմ հայրենաբաղձութիւնս իսկ է այդ մշուշը ու այդ տրտմութիւնը, որ իր կնիքը դրեր է նաեւ իմ նկարագրիս վրայ: Ես ինքզինքս փնտռեր են շարունակ ու տանջուեր են փնտռելով, ու իմ հոգեկան գալարումներս դրօշմուած են իմ գիծերուս մէջ:

Պիտի հասկնա՞ն գիս, գոնէ պիտի գտնուի մէկը որ իր ճիշդ արժէքով գնահատեալ կամ քննադատէ գործս: Պիտի հասկնա՞ն գոնէ այսքանը որ իմ թերութիւններս դիպուածի կամ անփութութեան արդիւնք չեն, այլ որոշ անյադթելի տրամադրութեան հետեւեանք:

Այս առաւօտ երբ արեւը պայծառ կերպով ծագեցաւ ու իր լոյսովը ողողեց ամէն ինչ, իմ պատկերներս երեւցան գունատ եւ զուրկ այն յուզումնականութենէն, որ այնքան հաղորդական կը համարէին բարեկամներս: Բայց երեկոյեան վարդագոյն մշուշին մէջ անոնք վերստացան իրենց արժէքը, ու երկար ատեն մնացի նստած անոնց դէմ՝ մտածելով եւ երագելով: Այդ պահուն սփոփուած զգացի ինքզինքս ու վստահութեամբ սկսայ նայիլ ու նոյն հետզհետէ հիանալ: Այս իրիկուն հոգիս համընթաց է այն վիճակներուն հետ, որ ծնունդ տուին այդ նկարներուն. թերեւս անոնց իրական արժանիքին վրայ կ'աւելցնեմ՝ իմ յատուկ տրամադրութիւնս, մտքովս կ'ամբողջացնեմ զանոնք, կը լրացնեմ անոնց թերիները ու միտքս հետզհետէ կը գերագրգռուի:

Այսու ամենայնիւ որոշ կերպով կ'զգամ որ իմ արտայայտութեանս ուղղակի միջոցը չեմ գտած տակաւին. թերեւս երանգապնակս պէտք էր տարբեր ըլլալ, կամ նիւթս յղանալու ուրիշ եղանակ պէտք էր փնտռելի... ոչ, ոչ, ի գուր է դարձեալ թափառիլ այդ անելներուն մէջ...

Իրականությունն այն է՝ որ արուեստի տեսակն է որ համապատասխան չէ իմ ներքին տրամադրությանս: Ես իսկապես նկարիչ չեմ, իմ վարպետս ճիշդ բնորոշեց եւ մատը վերքին վրայ դրաւ, երբ ըսաւ:

Դուք, Տիկին, երաժշտութիւն է որ կ'ընէք գոյներու եւ գիծերու միջոցով:

Ընկերներս ինձ ըսին:

Աւելի մեծ գովասանք չէիր կրնար յուսալ:

Տեսակէտով մը ճիշդ է թերեւս մէկ արուեստի սահմանները գլել անցնիլ եւ թեւակոխել ուրիշ արուեստի մը կալուածին մէջ, այնպիսի ճարտարութիւն է որ միշտ կը զարմացնէ մարդիկը, եւ մարդոց հիացման գլխաւոր դրդապատճառը զարմացումն է: Բայց ես չեմ ուզեր այս խնդրին վրայ նայիլ առաւել կամ նուազ յաջողութեան տեսակէտով:

Այս պահուս կրկին տարակոյսը կը մտնէ իմ մէջ եւ ես կուզեմ ինքզինքս անդրադառնալ եւ ճանչնալ իմ ներքին խռովայոյց աշխարհս:

Ճիշտ է որ ներշնչումը ինձ չի ներկայանար տեսիլքներով այլ երաժշտութեամբ: Տեսակ մը խուլ, ներքին, խորախորհուրդ համանուագ է, որ կ'սկսի որոտալ կամ մրմնջել հոգոյս մէջ: Անիկա նման չէ ո՛չ մէկ յայտնի նուագարանի եւ ոչ մէկ մարդկային ձայնի հնչականութեան: Անիկա ունի լայն ու դաշն կշռոյթը ծովին, քամին կամ անտառին ու երբեմն ալ մրմնջացող առուակի մը: Ո՞րկէց կուգայ այդ դաշնակութիւնը իմ մէջ, ուրկէ կը բղխի անիկա կամ ի՞նչ արտաքին պատճառներ կարող են ստեղծել այդ չեմ կարող յստակ ըսել. արտաքին աշխարհին եւ իմ ներքին էութեանս միջեւ եղած կապերը կարծես յաճախ կը խզուին, կամ՝ ինձ համար աննկատելի կը դառնան եւ հոգոյս խորքին մէջ է որ, ինչպէս անսպասելի եւ անժանօթ գանձարանէ մը, կը քաղեմ իմ ներշնչումս: Բայց ինչքա՞ն տարբեր է այն, որ կը տեսնեմ իմ հոգիիս աչքերով եւ այն որ կը դնեմ մարդկային աչքերու առաջք: Կարծես ձեռքս կը մխես մութին մէջ ոսկիով լիքը պարկի մը մէջ, ափիս մէջ պինդ կը սեղմեմ գանձը, զգոյշ դուրս կը բերեմ ձեռքս, կ'զգամ՝ շօշափելի կերպով ոսկիին գոյութիւնը, բայց երբ ձեռքս կը պարզեմ լոյս աշխարհին, այլ եւս ոչինչ կայ եւ պէտք է ուշադրութեամբ գննել

հագիւ թէ ոսկեփռոցի հետք մը գտնելու համար մորթին աննշմարելի ծակոտիքներուն մէջ: Այս է համեմատութիւնը:

Այսպէս որ իմ հոգիս երաժշտութիւնը, իմ ներքին փոթորիկներս ու ներքին խաղաղութիւններս տակաւին չեն յաջողած արտայայտել ու սեւեռել կտաւին վրայ, պիտի յաջողի՞մ երբէք վերցնել խորհրդաւոր քօղին մէկ անկիւնը պիտի յաջողի՞մ երբէք սուգով իմ խորքերուս մէջ մինչեւ յատակը եւ դուրս գալ ինքնագիտակից պայծառութեամբ եւ յաղթական:

Չետաքրքրուած եմ ինքս ինձմով: Ամէն պարագային հաստատ կերպով կարող եմ ըսել. այն ինչ որ մարդիկ պիտի տեսնեն իմ գործերուս մէջ, այդ քօղն իսկ է եւ ոչ թէ, ինչ որ կայ ետեւը այդ քօղին: Այդ մշուշն իսկ է որ կը խափանէ իմ հոգիս ու գիս ինքզինքիս անծանօթ կը դարձնէ. այդ այն տխրութիւնն իսկ է որ յառաջ կուգայ իմ կարօտէս, իմ բաղձանքէս, իմ անկարողութենէս:

Չաստատ կերպով կարող եմ ըսել նաեւ. ես երաժշտութիւն չեմ յաջողած ընել նկարչութեամբ այլ թերեւս վրձինս անգիտակցաբար հետեւեր է իմ ներքին կշռոյթին. իմ՝ երգերս ու իմ՝ հոգիս համանուագը մնացեր են համր եւ ոչ մէկ շեշտ տակաւին չէ արձակուած անկէ: Իմ պատկերներս կը համապատասխանեն իմ հոգիս լռութեան շրջաններուն, երբ կարծես ամբողջ պար մը ոգիներու իմ ներքին աշխարհէս անցած ու գացած է ու ամէն ինչ քարացած է այդ բացակայութեան միջոցին: Այս այնպիսի օրեր են որ մարդ ինքզինքը կ'զգայ թափուր եւ կ'զբաղի այդ պարապը լեցնել յիշողութիւններով:

Իմ պատկերներս ուրեմն, յիշողութեամբ ապրումներու արտացոլումն են ու լռութեան շրջանի ծնունդներ: Այդ է պատճառը, որ առանց ինձ մեռեալ են անոնք, ե՛ս կուտամ իրենց շունչը, ես կը տաքցնեմ գիրենք ու իմ աչքերս միայն կարող են գնահատել զանոնք, որովհետեւ ես միայն գիտեմ՝ իրենց բովանդակած տխրութեան կամ խաղաղութեան արժէքը:

Ի՞նչ կարող են տեսնել օտար աչքեր այդ բոլորին մէջ. տարտամ յուզում մը, կամ պարզապէս նկարին նիւթին, այսինքն կմախքին առաւել կամ նուազ հաճելիութիւնը:

Բայց այդ տարտամ յուզումն է այն աւելին, այն գերագոյնը, որ արուեստագէտները կը համարեն իրենց մեծագոյն յաջողութիւնը: Բայց ես կը յաւակնիմ բաղձալ աւելին: Սքանչելի սպասումի մը խռովքը կայ իմ մէջս, կ'զգամ որ հոգիս արտորի մէջ է եւ ակընդէտ կ'սպասէ իր ազատագրման. ի՞նչ բան եւ ո՞վ պիտի իղէ իր շղթաները... ամէն ժամու կարելի է յուսալ եւ յուսաբեկուիլ:

Բայց երբ գայ այդ պահը եւ հոգիս ճանչնայ այդ ցնծութիւնը, կուգեմ այն ատեն այդ ճարճատող հրդեհին հրթիռ մը դուրս արձակել, այդ ավեկոծուող փոթորիկէն շատրուան մը յուզմունքի եւ գեղեցկութեան, եւ այդ հրաշալի յայտնութեան ի տես, գիտեմ, որ մարդիկ կարող են գալարուիլ հաճոյքով եւ տանջանքով:

Ամբողջ օրը պատկերներուս առաջ թափառելով, խորհելով, երագելով եւ յուզուելով այնքան տկարացեր էի, որ երեկոյին տենդ ունեցայ. այս տենդը անբաժան ընկերս է, որ թերեւս իմ ուղեղային գրգռութեան հետեւանքն է: Իմ բարի եւ քաղցր բարեկամներէս մէկը, ծերունի արուեստագէտ մը, յաճախ եւ իրաւամբ կ'ըսէր ինձ:

Շատ կը մտածես եւ այդ լաւ չէ. յանձնուէ բնագոյն, լաւագոյն առաջնորդը արտիստին: Դարձիր միամիտ երեխայի նման եւ վերստին գտիր քու առաջին տարիներու զարմանալու եւ հիանալու հրաշալի յատկութիւնը: Այն ատեն է որ ճամբուն վրայ գլտորուող աննշան քարը ամբողջ հեքեաթ մը կը դառնայ քեզ համար, աշխարհը կը լեցուի ոգիներով, հրաշքներով եւ սքանչելիքներով եւ դուն կը կարողանաս արտասուել կամ ժպտիլ: Ու մարդիկ որ իրենց սեպիական աչքերով չեն կարող տեսնել այդ հրաշքները, քեզմով կ'արտասուեն ու կը ժպտին, եւ ահա այդ է արուեստը:

Յաճախ ես ինքս ըսեր եմ: Թերեւս այդ է ճշմարտութիւնը. յանձնեմ ինքզինքս իմ բնագոյնս, բայց մարդիկ կան որ իրենց մանկութիւնը կորսնցուցած են անդառնալի կերպով, որովհետեւ իրենց էութեան խորհուրդին մէջ ստացած են իրենց ճակատագրին ազդարարութիւնը: Ի՞նչպէս ժպտիլ եւ քաղցրօրէն արտասուել, երբ շղթայուած հոգիիդ անհամբեր թեւաբախումները կ'զգաս անտեսանելի սեմի մը վրայ:

Նաեւ պէտք է ըսել, թէ վաղուց է որ ես հրաժարած եմ դիպուածին ընծայուած դիրին յաշողութենէն: Ես ոչինչ կ'ուզեմ պարտի կոյր դիպուածին: Եւ երբ վրձինս առանց առաջնորդուելու իմ յստակ կամքէս, դիպուծով յառաջ բերե գոյներու ներդաշնակութիւն մը, կամ բարեյաշող ուրուագիծ մը, անմիջապէս կը սրբեմ գայն կտաւիս վրայէն:

Այս տենդը մտածումին տենդն է, բայց նաեւ Պօլսական տենդը, տեսակ մը ֆիզիքական յուզումնք, գարնանային երկոններու հետ անբաժան այնքան խռովիչ բուրնունք կայ մթնոլորդին մէջ եւ խոնաութիւն ու միանգամայն գաղջ ալիք հարաւային քամիի: Ու մանաւանդ այն անկայուն, յարափոփոխ ու տենդագին խռովքը, որ կարծես անվերջ մահ է եւ վերածնունդ. լոյսերը կը պլպլան ու կը մարին, աննկատելի մրմունջ մը, տեսակ մը մթնոլորդային սարսուտ օդը կը յուզէ եւ երբեմն անշնչելի կը դարձնէ կարծես երբեմն աննշմարելի թեւաւոր մը կ'անցնի եւ լոյսերը կը հանգին իր շուքին ներքեւ եւ ծառերուն սօսափիւնը կը լռէ: Ամէն ինչ կը դառնայ երագ, խռովք կամ մղձաւանջ. մարդիկ կ'անցնին փողոցներէն գինովներու պէս դեղեւելով: Ամէն ինչ, բնութեան տեսարան, մարդկային զգացում, քաղաքին սիլուէթը, նոճիներու սլացումները, մուէզիներն աղօթքը, ամէն ինչ ոչ միայն իրենց բարձրագոյն գերագրգռութեան կը հասնին, այլ եւ կը խառնուին իրարու հետ: Ես կը յիշեմ որ շատ փոքր հասակէս այդ բոլորը կ'զգայի տարտամ կերպով եւ երբ գիշերները անկողնիս վարդով բուրումնաւէտ սաւաններուն մէջ կզկտած, վերմակս կը բարձրացնէի մինչեւ հրատոշոր ճակատս եւ կը սարսռայի, այդ սարսուտները այնքան նման էին այս իրիկուան սարսուտներուն:

Աշխարհիս վրայ ոչ մէկ քաղաքի մէջ թերեւս, գարնան խռովքը չունի այս գերանուրբ եւ հիւանդագին հաղորդականութիւնը մարդոց ներքին էութեան մէջ:

Մայրամուտին, իմ գրասեղանիս առաջ նստած, դիզուած թերթերը կը թղթատէի ու գուարճանալով կը կարդայի իմ մասիս գրուած սնամէջ շողոքորթութիւններ երբ Սեպուհեան եկաւ այցելութեան իմ նախկին ուսուցիչներէս մէկուն, Հրանդ Չերքէզեանի հետ:

Զիս բարեւելէն անմիջապէս ետքը, Սեպուհեան, գլխու ցնցումով մը ետ մղելով ճակատին վրայ ինկած մագերը, աչքերը յառեց թերթերուն եւ բարձրաձայն

Ծիծաղեց:

Ա՛յ ձեզ հոսիսներ:

Հրանդ Չերքեզեան ծերացեր է, բայց հակառակ իր այեխառն մօրուքին եւ ճաղատ գլուխին, դէմքը պահած է նախկին ոգեւորեալ արտայայտութիւնը: Իր չափազանց կարճատես աչքերը իմ վրաս սեւեռեց, կորացած քամակը փորձեց ուղղել եւ ձեռքս պինդ սեղմած ըսաւ գորովանքով:

Էմնա, դուն իմ յոյսերս իրականացուցիր:

Իր խօսքերէն մանկան նման ուրախ եւ գոհ զգացի ինքզինքս, ինչպէս այն ատենները երբ իր նախասիրած աշակերտուհին էի: Կը յիշեմ որոշակի, թաղային վարժարանի դասարանը, ամառուան սկիզբի շատ տաք առաւօտ մը ստորներով ծածկուած պատուհաններուն ետեւէն անհամար բզէզներ կը բզզան. պարտէզին միակ ծառը, մեծ թմբին, իր բուրումնաւետ շունչը կը դրկէ մեզ եւ ուսուցիչը կը կարդայ գրաբար հատուած մը: Կը յիշեմ թէ ինչպէս իր ընթերցանութեան դասական գեղեցկութիւնը եւ նախադասութեանց յստակ եւ ամուր կառուցուածքը, ձայնին շեշտը, արտասանութեան կշռոյթը երաժշտութեան նման կը յուզէին զիս եւ երեւակայութեանս մէջ կ'անցնէին արձանային ձեւերու յաջորդութիւն մը: Քիչ բան կը հասկնայի ընթերցանութենէն եւ բառերէն շատերը անիմանալի կը մնային ինձ: Բայց աւելի բան մը քան տառական նշանակութիւնը, կարծես մեր նախնեաց ոգին կը կանգնէր դիմացս ու ես շունչս բռնած, կենդրոնացած ոգեւորութեամբ մը անձնատուր կ'ըլլայի երագիս:

Կարծես խզուած կապ մը պիտի վերահաստատուէր, կարծես հոգիս իր աքսորէն պիտի վերադառնար, ինքզինքը ճանչնալու երջանկութիւնովը պիտի սարսուար եւ անմատչելի երանութեան մը ակընդէտ, յանկարծ կ'սթափուէի բրտութեամբ:

Մեպուհեան խանգարեց մտքիս սլացումը դէպի անցեալ յիշողութիւնները:

Եկեր ենք ըսաւ, ձեր պատկերները տեսնելու:

Հաճոյքով, պատասխանեցի, բայց վայրկեան մը հանգստացէք:



Երկուքն ալ նստեցան բազմոցին վրայ որ սենեակին ամբողջ ճակատը կը բռնէր եւ աչքերնին դարձնելով բնութեան գեղեցկութեան՝ կը նայէին երկարօրէն, լռին հիացումով:

Գալարագեղ հովիտը կը տարածուի մինչեւ Չամլճաները եւ Գայրջ տաղիի սիրուն կոհակատրումը որ առաւօտները՝ վարդագոյն, երեկոները մանիշակագոյն մշուշով մը կը զարդարուի, այս ժամուս իր ամենէն յստակ եւ լուսաւոր կապոյտ գոյնը ստացեր է եւ կարծես պարզապէս երկնքի խտացում մըն է: Անդին ծովը, սքանչելի Մարմարան իր կղզիներով որոնց բարձրութիւնները կը շարունակեն Գայրջ տաղիի կոհակատրումը: Ծովուն փալփուն կուրծքին վրայ անոնց շրջագիծը այնքան լուծուած է արեւմտի մեղմ լոյսին մէջ, որ այերական եւ երագային գոյութեան մը աննիթականութիւնը ստացեր են:

Մեպուհեան ընդոստ դէպի ինձ դարձաւ, գլուխը կրթնցուց բարձին եւ սկսաւ խօսիլ:

Է՛հ այսպէս ուրեմն, տիկին, ձեր երկիրը վերադարձաք եւ լաւ ըրիք. այստեղ ունիք գեղեցիկ բնանկարներ, նկարելու շատ բան եւ մեր հասարակութիւնը պէտք ունի թարմ ուժերու:

Խրտչեցաւ այդ խօսքերէն. ի՞նչ կ'սպասեն ինձմէ... Մեպուհեան կը պատկանի այն մարդոց շարքին որոնք արուեստին մասին կը խօսին առանց երբէք արուեստի մասին խորհած ըլլալու: Այն ինչ որ մեր ուրախութիւնն է, մեր ցաւը, մեր կրօնքը, մեր մոլեռանդութիւնը, մեր անբուժելի հիւանդութիւնը, միջոց մըն է միայն իրեն նման մարդոց համար, որ արժէք ունի այն ատեն երբ ուղղակի եւ անմիջապէս կը ծառայէ պայքարի մէջ մտած կողմերէն մէկուն կամ միւսին:

Այս բաներուն մտածելով աւելի ուշադիր կը նայեմ Մեպուհեանին. իր գուարթ դէմքը, իր գեղեցիկ աչքերուն պայծառ նայուածքը կարող են ուրիշ բան գուշակել տալ քան թէ այն՝ որ է: Բայց հայրենասիրական րօմանթիզմը արձակուած քամիի մը նման կ'անցնի իր ներքին աշխարհէն եւ ամէն ինչ, գաղափար, զգացում, մտածում, մրրիկի ժամանակ օդին մէջ բարձրացած հողմավար տերեւներու ուղեկորոյս խուճապը կ'ստանան. հակառակ իր հոնտորական տաղանդին, ինքն ալ չի գիտեր թէ ինչ կ'ըսէ եւ իր դիպուածով արտասանած մէկ

փայլուն նախադասութիւնը կ'որոշէ իր մնացեալ ըսելիքը: Անոր միտքը առագաստները պարզած նաւու մը նման է որ դէկ չունի. դուրսէն դիտողի մը, արագ եւ գեղեցիկ ընթացքով իր նպատակին դիմելու տպաւորութիւնը կ'ընէ. բայց ինքն ալ չի գիտեր թէ դէպի որ ավիոնքը պիտի ժամանէ եւ չի գիտեր նոյն իսկ որ կրնայ նաւաբեկուիլ ժայռերու վրայ:

Այսու ամենայնի սովորական կեանքի մէջ հաճելի մարդ է, հաղորդական, բարեացակամ եւ ես կը սիրեմ իր ժպիտը որ իր յատուկ շնորհը ունի. անիկա կը բացուի ինչպէս դիւրին ծաղկող ծաղիկ մը, առաւօտեան առաջին ճառագայթներէն:

Ծերացեր է Հրանդ Չերքեզեան, բայց այդ առաջին տպաւորութենէն ետքը հետզհետէ կը գտնեն հետքերը այն մարդուն որ այնքան խոր տպաւորութիւն գործած է իմ մանկութեանս վրայ եւ նոյն իսկ ատի ուշ, երբ իր դժբաղդ կեանքին պատմութիւնը լսեր եմ: Անիկա կարելի է տգեղ համարել մարդոց հասարակ դատողութեամբ բայց ես կը տեսնեմ անբացատրելի եւ մասնայատուկ գեղեցկութիւն այդ կնճռոտ դէմքին վրայ որ մտածումի կեդրոնացման եւ ուժի արտայայտութիւնը կը կրէ: Ալեխառն եւ անխնամ մօրուքը կը ծածկէ այտերը եւ իր թանձր շրթները անսահման բարութեան, իմացական բարութեան տպաւորութիւնը կը ներշնչեն. բայց անիկա բարի չէ այն կերպով ինչպէս մարդիկ կ'ըմբռնեն ընդհանրապէս. անիկա չունի այն դիւրագրգիռ և զգայական բարութիւնը որ հետեւանքն է միայն անմիջական եւ հարեւանցի տպաւորութիւններու կամ շղային անհանգստութեան մը. երբ նոյն իսկ մարդոց ըսեմ թէ Հրանդ Չերքեզեան բարի է, կը կարծեն թէ կուզեմ հեզնել: Անիկա խնամքով կը ծածկէ իր իմաստուն բարութեան գերագոյն եւ տանջալի զգացումը որուն ամօթխածութիւնը ունի իր հոգին եւ գայն ատի լաւ ծածկելու համար է թերեւս որ երբեմն կը դառնայ խիստ աններողամիտ:

Իր սեւ աչքերը ծածկուած ակնոցներուն ներքեւ կարող էին գեղեցիկ համարուիլ, իր չէշոտ քիթը, իր լայն ճակատը, իր ճաղատ գլուխը կը լրացնեն իր դէմքին ինքնատիպ պատկերը, որուն ամբողջութեան վրայ միշտ տեսած եմ տեսակ մը յանկուցիչ շունչ, բարձր մտաւորականի մտախոհութիւն եւ այդ իսկ է որ մշտատեւ երիտասարդութիւն կը շնորհէ իրեն: Քիչ կորաքամակ է բայց այդ ալ կարծես

հետեւանքն է իր մտախոհութեան. ատիկա ինքն իր վրայ ամփոփուելու ճիգ մըն է ու նաեւ իր ուսերը կը կրեն ինքզինքին պարտադրած խիստ սկզբունքներուն ճնշիչ բեռը:

Այդ մարդը ոչ միայն անհանգիստ է իր առաքինութիւններով այլ եւ ուրիշները անհանգիստ կ'ընէ. որովհետեւ մեր ժամանակներու մէջ, մարդիկ տեղատրուած հանգստաւէտ եւ իրենց չափին համեմատ կերտուած երկբայական բարոյականի մը մէջ, թշնամի կը նկատեն անոնք որ իրենց պահանջկոտ հոգիին վրդովմունքը կը կրեն: Հրանդ Չերքեզեանի հաճոյակատարութեան պակասը անհանդուրժելի է շատ շատերուն: Անիկա գրեթէ երբէք չի ժպտիր ոչ թէ որովհետեւ իր հոգին գուրկ է ուրախութենէ այլ որովհետեւ ամէն ինչ շատ խոր թաղուած է իր մէջ. ամէն ինչ կ'անցնի այդ խիստ եւ աններող դիմակին ներքեւ եւ իր հոգեկան շարժումները մինչեւ մակերեսը չեն բարձրանար: Զինքը ճանչնալու եւ սիրելու համար պէտք է թափանցել իր ամրափակ ներքին կեանքին եւ այդ ընելու համար պէտք է իր սրտին ճանքան գտնել: Ասիկա ջանք մըն է որ անշուշտ ամուլ չի մնար եւ ես միշտ հետաքրքրութիւնը ունեցած եմ այդ յայտնութեան: Շատ անգամներ խորհած եմ իր պատկերը նկարել. այդ տգեղութեան երեւոյթէն եւ այդ տգեղութեան իսկ շնորհիւ կարելի է գծել իր հոգեկան գեղեցկութիւնը եւ անոր լոյսովը ողողել իր պատկերը:

Այն միջոցին որ Սեպուհեան եւ Չերքեզեան սրահ պիտի մտնէին պատկերներս տեսնելու, խումբ մը ուրիշ ծանօթներ եկան այցելութեան եւ անմիջապէս խօսքը դարձաւ հակայեղափոխական շարժումին: Կիլիկիոյ կոտորածներուն, եւ թրքահայ նոր դաշնագրութեան մը ծրագրին վրայ: Խօսակցութիւնը շուտով վեճի փոխուեցաւ եւ բուն կարծիքներու շնորհիւ, աղմկալի վիճաբանութիւնը սանձարձակ դարձուց ամէն մէկը:

Ի՛նչ պատկեր, ի՛նչ արուեստ այս դժոխքին մէջ. մութը պատեց աշխարհը ու հիւրերս մեկնեցան մինչեւ դրան սեմին վրայ վիճելով եւ կատարելապէս մոռցած թէ ինչո՞ւ համար եկած էին ինձ այցելութեան:

Դժուար է երբ կիրքերը այսքան բորբոքուած են, երբ քաղաքական բնույթ

ունեցող հարցերը անմիջական եւ վճռական նշանակութիւն են ստացեր, երբ մարդիկ օրը օրին կապրին առանց ետ նայելու եւ առանց իրենց միտքը սեւեռելու ապագայի հորիզոններուն, դժուար է ոչ միայն մարդիկը զբաղեցնել արուեստով այլ նոյն իսկ ամփոփուիլ եւ անխառն հաճոյքով անձնատուր ըլլալ մեր երագին: Երբ կը հանդիպին գրողներու, բանաստեղծներու, երաժիշտներու որոնք ամէն մէկը գործօն կերպով մասնակից են այն միջոցին հանրային վեճերու, որոնք նոյն իսկ իրենց համբաւը եւ իրենց անուան հեղինակութիւնը ի սպաս կը դնեն այս կամ այն կողմին, ինձ կը թուի որ իրենց դերէն դուրս եկած են կամ ես անօգուտ անձնատրութիւն են իրենց մէջ, զարտուղութիւն մը անխուսափելի եւ ընդհանուր մտայնութենէն որը պէտք է կրել եւ որուն անսահմանօրէն պէտք է համբերել: Ինձ կը թուի նաեւ որ հակառակ ամէն անմիջական մտահոգութիւններու ամէն մարդու հոգւոյն մէջ անկիւններ կան ուր միշտ կարող են ապաստանիլ, անկոխ եւ անկեղծ տաճարներ որ ամէն մէկը ինքզինքին համար կը կառուցանէ եւ վայ անոնց միայն, որոնց հոգիները թափուր են:

Արտաքին աշխարհի աղմուկը, ցաւի կամ ուրախութեան աղաղակները անշուշտ թէ կը խանգարեն մեզ, կը խուժեն դէպի մեր ներքին էութիւնը բայց կարող են արդեօք մարել այն լուսաւոր ժպիտը որ ծագեցաւ դէմքիս վրայ երբ երեկոյին շոգենաւով վերադարձիս, տեսայ հրաշալի վերջալոյսը: Ի՞նչ երանգատրում եւ ինչ փառայեղ պերճանք լոյսի եւ գոյնի. հետզհետէ մանիշակագոյն մթնոլորտին մէջ Սթամպօլի սիլուէթը խտացաւ, դարձաւ մթին, մինչ ոսկի երիզ մը կը հետեւէր գմբէթներու եւ մինարէներու արտաքին գծին. ոսկի եւ սեւ գիծեր միայն ու բոլոր երանգները մարեցան եւ ծովն իսկ ստացաւ մթին մակերես մը, որուն կոհակներուն գագաթները կը պսպղային ոսկեղէն ցոլքերով:

Յաճախ կը լսեմ յիմար խօսքը. Որքան բաներ ունիք նկարելու կրնամ ըսել թէ իմ կրած տպաւորութիւններս այնքան ուժգին են որ բան մը չեմ կրնար նկարել այժմ. այդ բաբախուն եւ անվերջ գեղեցկութեան առաջ խելայեղ մանուկ մը դարձած եմ եւ կարծես կորսնցուցած եմ արուեստի ամենէն տարրական միջոցները: Պէտք է սպասել եւ տոգորուիլ այդ գեղեցկութիւնով եւ այն բոլոր յուզումներով որ մեր անհատական եւ հաւաքական կեանքը կ'ընծայէ: Պէտք է սպասել որ հոգին բեղմնատրուի եւ իր անբռնաբարելի խորհուրդին մէջ պատրաստէ գործը որ

պիտի ծնի օր մը: Վաղաժամ արտադրութիւնը, անհամբերութիւնը, եւ առաջին տպատրութիւններու անհամբերութիւնն է միայն որ թոյլ կուտայ ինձ յուսալու որ օր մը պիտի յաջողիմ վերջապէս իմ հոգոյս մէջ կերտուած անանցանելի գեղեցկութիւնը սեւեռել կտաւին վրայ:

Պէտք չէ նաեւ յաջող ժամը փախցնել. կը մըմնջէ մտածումս:

Այդ իսկ է ամբողջ գաղտնիքը. պէտք չէ շտապել, պէտք չէ նաեւ շատ ուշանալ եւ կորզել ժամանակի անգոյն յաջորդութեան մէջ այն ժամը, ստեղծագործութեան ժամը, որ մեր բախտը եւ փառքը կը բովանդակէ իր մէջ:

Անսպասելի կերպով ծանօթացայ տիկին Սիրանուշ Դանիէլեանի հետ: Իմ մասին շատ լսած էի եւ իր բանաստեղծութեանց հատորը սնարի գիրք մը եղած էր ինձ համար: Իր լաւ հաստատուած գրական համբաւը, իր բարեկամներուն եւ ծանօթներուն խանդավառ եւ ջերմագին համակրանքը իր անձին վերաբերմամբ, զինքը կը դարձնեն Ա. Պոլսոյ ամենէն ազդեցիկ կիներէն մէկը: Շատ բան չէ գրած եւ իր ոտանատրները հագուադէպ կերպով կ'երեւան, բայց ամէն անգամուան անոնք մասնաւոր եւ շատ անձնական շեշտ մը կը յայտնաբերեն:

Անտարակուսելի է որ շատ աւելի բան կայ իր մէջ քան արտայայտած է, նոյն իսկ թերեւս տարբեր եւ անծանօթ մնացած երգեր կան իր մէջ որ երբէք չի պիտի երգէ եւ անոնք պիտի մնան քողարկուած իր լռութիւնով:

Յաճախ, հեռուէն մտածեր եմ իմ վրայ եւ հետաքրքիր մնացած եմ իրմով բայց եւ այնպէս միշտ զգուշացեր եմ իր մասին ոեւ է տեղեկութիւն եւ կարծիք հարցնել այն վախով որ մտքիս մէջ կազմած ֆիզիքական եւ բարոյական պատկերը կ'աղարտի ոեւ է կերպով:

Առաջին անգամ իր անունը լսեցի Հրանդ Չերքէզեանէ եւ իմ վրաս խոր տպատրութիւն ըրաւ ուսուցչիս յուզուած համարումը այդ բանաստեղծուիկին նկատմամբ որ այն ատեն, նոր աստղի մը պէս կը փայլէր մեր գրական միգամածին մէջ: Աւելի ուշ երբ վստահ Չերքէզեանի կարծիքին, ուզեցի խօսիլ տիկին Դանիէլեանի հատորին վրայ, անիկա ինձ ընդհատեց գրեթէ

կոպտութեամբ ինքը ատելի կ'արժէ քան իր հատորը:

Ինչու Չերքէզեանի այդ առաջին ոգետրութիւնը եւ վերջին դժկամակութիւնը, ինչո՞վ էր յուսախաբ: Այն ատեն ինձ անկարելի էր հասկնալ, բայց ես յետոյ ընթոնեցի Չերքէզեանը: Քանի անգամներ, անձնական հետապնդումներէ յոգնած դէպի խուսափուկ եւ անմատչելի նպատակը, ոգիս ամոքուած է հաւատքով ուրիշ եւ նոր տաղանդի մը առթած թարմ ոգետրութիւնովը: Ինչ որ ինձ համար եւ ինձ նման հազար հազարներու համար անկարելի եղած է: Կրնայ կարելի դառնալ մէկու մը համար եւ յայտնուող տաղանդ մը միշտ մոգական գաւազան մը ունի ձեռքը: Հրաշքի մը սպասելու իրաւունքը կը շնորհէ մեզ:

Չերքէզեան իր գեղարուեստական նպատակներէն մէկուն իրագործման հնարաւորութիւնը տեսած էր անշուշտ տիկին Դանիէլեանի գեղեցիկ սկզբնաւորութեան մէջ: Այդ է իր յուսախաբութեան պատճառը:

Կեցած էինք Չերքէզեանի հետ Սկիւտարի նաւամատոյցը երբ ուսուցիչս ականջիս փսփսաց:

Տիկին Դանիէլեանը:

Միջահասակ, նիհար, կիսադէմքը ստուերով քողարկուած լայնեզր եւ պարզ գլխարկին շուրին մէջ, քանի մը քայլ անդին մեզ նման կ'սպասէր կառքի:

Քանի՞ տարեկան է այդ տիկին Դանիէլեանը...

Անյիշատակ ժամանակներէ ի վեր լսած էի իր անունը եւ այժմ գարնացած կը նայելի երիտասարդական երեւոյթով այդ կնոջ երբ Չերքէզեան մօտիկցաւ իրեն:

Ժպտուն եւ հանդարտ աչքեր յանկարծ դէպի ինձ դարձան եւ մասնաւոր հետաքրքրութեամբ մը զիս դիտեցին:

Գրեթէ անմիջապէս յառաջանալով դէպի ինձ Չերքէզեան ներկայացուց

Տիկին Էմմա, յայտնի նկարչուհին:

Տիկին Դանիելեանի դէմքը գորովագին լրջութիւն մը ստացաւ, ձեռքը երկնցուց ինձ եւ ես մեծ հաճոյքով սեղմեցի, ինչպէս հին բարեկամի մը ձեռքը:

Երբ վերջապէս կառքի մը մէջ տեղաւորուած սկսանք բարձրանալ գառիվերէն մեր նայուածքները կրկին իրարու հանդիպեցան: Աւելի ներգօր զգացումով մը դիտեցի գինքը: Արդէն ուրիշ կերպարանք կը տեսնէի եւ բանաստեղծուիկին բարոյական դիմագիծը աւելի ճիշդ եւ յստակ գիծերով կը յայտնուէր: Քանի մը ճերմակ թելեր կը զարդարեն իր թխագոյն մագերը ողորկ ճակատին վրայ. չէ կարելի ըսել թէ ֆիզիքական երիտասարդութիւնը պահած է բայց իր դէմքը կը կրէ արտայայտութիւնը իր ժպիտին ու նայուածքի կայծկլտումներուն եւ գիծերը կ'ողողուին եռանդի եւ ոգեւորութեան թարմութեամբ: Կարելի չէ ըսել որ գեղեցիկ է, կարելի չէ ըսել որ տգեղ է, որովհետեւ նոյն իսկ իր դիմագծութեան անկանոնութիւնը մասնաւոր շնորհալիութեան մը կը վերածուի իր ժպիտով եւ նայուածքին անսովոր փայլով, եւ այդ բոլորը յառաջ կը բերեն վերին աստիճանի հաղորդական յուզմունք: Բայց այդ յուզմունքը խաղաղ է իր մէջ ինչպէս հոգեկան յարատեւ վիճակ, եւ անմիջապէս որ լսեցի իր դաշն, հանդարտ եւ կշռոյթաւոր ձայնը, այլ եւս ամբողջովին կրեցի այդ տիրական անդորրութեան զգացումը:

Քիչ խօսեցանք ճանքան, խանգարուած կառքին ցնցումներէն եւ անցորդներու հետաքրքրութենէն:

Լսեր եմ ձեր մասին եւ ձեր յաջողութիւնները արտասահմանի մէջ ինձ ուրախացուցեր են, կ'ուզեմ գալ ձեր պատկերները տեսնել:

Օ՛հ տիկին... պատասխանեցի, չէի համարձակեր ձեզ հրաւիրել:

Ինչո՞ւ... բացականչեց զարմացած եւ իր ժպտուն աչքերը գրեթէ հեգնութեամբ կայծկլտուն, պահ մը սեւեռեց Չերքեզեանի որ կը յամառէր բացարձակ լռութիւն պահել:

Յետոյ լրջութեամբ աւելցուց:

Այնքան քիչ մարդ կայ այս քաղաքին մէջ որ կարենան իրար հասկնալ... յոյս ունիմ որ լաւ բարեկամներ կը դառնանք:

Շատ բան կ'ուզէի պատասխանել բայց չեմ գիտեր ինչ թոթովեցի, սիրտս գեղուն էր երախտապարտութեամբ:

Գիտէ՞ք այդպէս է... շարունակեց, մենք կարծես արքայեր ենք օտար եւ հեռաւոր երկրի մը մէջ: Մենք մեր ծննդավայրին մէջ արքայեր ենք որովհետեւ գրկուած ենք այն մթնոլորդէն որ մեր ժողովուրդը իր հաւաքական կեանքով պիտի ստեղծեր մեր շուրջը... դիւրաբեկ եւ ցանցառ թելերով միայն կապուած ենք մեր բնաշխարհին հետ...

Պահ մը մտածկոտ մնաց Չէրքէզեանի խոժոռ դէմքին նայելով, բայց կարծես սթափեցաւ եւ շարունակեց:

Բայց գոնէ մենք, արուեստագէտներս կրնանք արքայի ընկերներ դառնալ:

Այս վերջին խօսքերը ըսաւ առանց թախիծի, կարծես առաջուց համակերպած այդպիսի վիճակի մը տխրութիւններուն:

Խառնաշփոթ կերպով մտածումներու եւ զգացումներու յուզում մը բարձրացաւ իմ մէջս. հազար բան կ'ուզէի ըսել. բայց ձայնս խեղդուեցաւ կոկորդիս մէջ. ոչ, ես չեմ համակերպած այդ տխրութեան եւ իմ դէմքիս վրայ երբէք չի պիտի երեւայ Չէրքէզեանի մոայլ մտասելեռումի մը վրայ կանգ առած մարդու յուսահատութիւնը եւ ոչ ալ տիկին Դանիէլեանի իմաստուն անդորութիւնը: Ես պիտի մերժեմ նաեւ երկբայական ուրախութիւնը այն զգացումներուն որոնք երիտասարդ կնոջ մը դէմքը կը զարդարեն անփոյթ ժպիտով: Ես պիտի հետապնդեմ իմ երագս ամէն ճանապարհներու վրայ եւ հոգիս պիտի ստանայ իր ազատութիւնը: Կ'ուզեմ իմ յոյսս եւ հաւատքս ներշնչել ամենուն, առատաձեռն սերմանել ամենուրեք, կ'ուզեմ ըսել ոչ թէ արքայի ընկերներ, այլ դառնանք պայքարի ընկերներ ու միասին փնտռենք ներշնչման մարտը եւ հարազատ աղբիւրները, բայց իմ ոգեւորուած նայուածքս կ'իյնայ տիկին Դանիէլեանի հեզմական դէմքին վրայ: Այնքա՛ն ամէն բանէ հրաժարած մէկու մը երեւոյթը ունի վերջալուսային կարմիր մթնոլորդին մէջ: Իր նուրբ կիսադէմքը ստացեր է տարօրինակ թափանցիկութիւն եւ իր աչքերուն յստակ լոյսը կարծես կը բացուի անյատակ վիհի մը վրայ:



Ու ես ինքզինքս այնքան տարբեր պիտի համարեի իրմեն, տարբեր խառնուածք,  
տարբեր նկարագիր, տարբեր ճաշակ, յանկարծ զգացի ոչ միայն նման իրեն, այլ,  
նոյն, ինչպէս երկու քոյր հոգիներ, արտորի ընկերներ:

Այդ է թերեւս պատճառներուն պատճառը: Ամէն մէկս մենակ ենք եւ լաւագոյն  
պարագային ասուպի մը պէս կ'անցնենք օտար երկնականամարներուն վրայէն.  
ինչքան ալ փայլուն եւ շողշողուն ըլլայ մեր թողած լուսաւոր հետքը, անիկա  
դատապարտուած է անօտրանալու եւ կորսուելու: Մեր առանձին ձայնը համերգի  
մը ներդաշնակութեան չի պիտի խառնուի երբէք: Մենք մեր կողերը դատարկ կը  
զգանք եւ այդ է անշուշտ պատճառը, որ մեր հոգին շղթայուած է մեր անձնական  
ցաւին եւ ուրախութեան մէջ: Ամէն անգամ որ անիկա անհանգիստ իր  
գերութենէն, ուզէ թափահարել. իր թռիչքը կը խորտակուի մեր յատուկ կեանքը  
սահմանափակող պարիսպներէն: Հաւաքական կեանքի ալեկոծ ծովը եւ ազատ  
հորիզոնը միայն պիտի շնորհէր մեզ ստեղծագործութեան զօրեղ շունչը: Մինչ  
մենք մեր վրայ խտացած, ստիպուած ենք բիրեղանալ, խզուած անցեալէն եւ  
արգելափակուած՝ ապագայէն:

Երեկոյթ Վառվառեաններու տունը: Ընդարձակ հիւրասենեակին պատուհանները  
կը բացուին պարտէզին վրայ որուն շքեղ զարդերը կը կազմեն գոյգ մը դարաւոր  
մայրիներ, անոնց հովանոցաձեւ եւ ծաւալող ճիւղերը կը փակեն գրեթէ հորիզոնը:  
Աւելի հեռուն ուրիշ պարտէզներ կան եւ արտեր վայրի ծաղիկներով լիքը:  
Երեկոյեան այս ժամուն երբ մայրիներու խիտ եւ մթին սիլուէթին ետեւ հրդեհուած  
երկնականարը կը տժգունի, հետզհետէ զգլխիչ բուրում մը վայրի ծաղիկներու եւ  
արեւէն այրած հողի, կուգայ մինչեւ մեզ ու կարծես մեզ կը տոգորէ բնութեան  
յոյզով:

Օրհորդ Սօֆի Վառվառեան ճնշուած է անձկալի եւ անդարմանելի տխրութիւնով:  
Ո՞վ կարող էր երեւակայել: Իր հեզնութեամբ լի սրամտութիւնները, իր տենդագին  
գուարթութիւնը կարծել կուտան առհասարակ որ տխրութեան ստուերը երբէք չէ  
անցած իր հոգիին մէջէն: Շրջապատուած եւ սիրուած իր գմայլելի  
գեղեցկութեան շնորհիւ որ փառքի մը պէս կը կրէ իր հպարտ դէմքին վրայ,  
անիկա կարող էր երջանիկ համարուել եւ հասած իր բոլոր նպատակներուն:

Բայց այս իրիկուն ահա, կը յայտնուի ինձ իր բուն կերպարանքը, նկարչի վերլուծող աչքերով կը նային իրեն. իր թաւ եւ անթերի գիծով մը կամարացող յօնքերն են որ կու տան այդ խրոխտ արտայայտութիւնը իր դողար եւ նիհար դէմքին որ կարծես մեղմօրէն մաշուած է ներքին եւ սաստիկ զգացումներու ազդեցութեամբ: Բայց ինչ որ կը տիրապետէ իր դէմքին, իր ամբողջ անձին, իր գոյգ մը անսովոր գեղեցկութեամբ աչքերն են, իմացականութեամբ լեցուն:

Խորհեր ես երբէք, Էմմա, որ օրերուն մէջ օր մը կայ, անձանօթ թուական մը, ժամ մը, երբ անզգայ ու տժգոյն մեզ պիտի դնեն դագաղի մը մէջ, ձեռքերնիս ծալլած կուրծքերնուս վրայ ու պատանքնիս ծածկուած ծաղիկներով: Ծաղիկներով... Էմմա՛, որպէս զի մեզ շրջապատող առաւել կամ նուազ անտարբեր մարդիկ չզգան մեր կագնալուծման արտաշնչութիւնները:

Խորհեր եմ Սօֆի եւ յաճախ. բայց միանգամայն կը մտածեմ. դժուար է կեանքի, լոյսի եւ յոյսերու շողշողումին մէջ մտածել մահուան մասին. անիկա անհաւատալի է այժմ եւ հետեւաբար անիրական, բայց երբ հետզհետէ մարին լոյսերը, երբ մեր ախորժակները ու փափաքները մեղմանան, երբ սկսինք ծերանալ...

Մի խօսիր ծերութեան մասին, կը նախընտրեմ մեռնիլ իմ երիտասարդութեանս ու գեղեցկութեանս լրումին մէջ. կ'ուզեմ որ իմ յիշատակս մնայ անեղծ, որ իմ կերպարանքս անհետանայ այս աշխարհիս վրայէն առանց խեղաթիրուելու, այնպէս ինչպէս եմ այժմ...

Պա՛հ... մահուրնէ ամիս մը ետքը, ինչքան ալ երիտասարդ ըլլանք ու գեղեցիկ, հաւասար ենք հարիւր տարիէ ի վեր մեռած մարդոց...

Աւելի խտացած՝ հեռաւոր դաշտերու բուրմունքը եկաւ մեզի հարաւային քամիի գաղջ ալիքը անցաւ եւ մայրիները երկարօրէն սօսափեցին. հորիզոնը կը մարէր իր վերջին երանգին մէջ. երկնականարին վրայ ամպերու ճերմակ ծուէններ կ'անցնէին արագ, արագ, կարծես դիմելով դէպի նպատակ մը: Աւելի գօրաւոր, մօտակայ պարտէզէն մեզ եկաւ կլիսիններու բուրումը, ծաւալեցաւ, տիրապետեց մթնոլորդին ու կարծես իր հետզհետէ խիտ ալիքներով մեզ կը խօսէր անսահմանելի, անարտայայտելի բանի մը մասին որը սակայն կ'ըմբռնէինք

ներքին զգայնությունով մը:

Շուտով փակեցինք պատուհանները, սարսուղով մայիսեան երեկոյին գովութենէն եւ թերեւս այն խոսկլքէն որ մեր տարօրինակ խօսակցութիւնը գրեր էր մեր հոգիներուն մէջ:

Անմիջապէս որ կապերտէ վարագոյրները իջան եւ լոյսը վառուեցաւ, սեւ մտածումները անհետացան եւ սկսանք մտերմաբար խօսակցիլ, խոր եւ հանգստաւէտ թիկնաթոռներու մէջ ընկողմանած, անձնատուր գաղջ եւ կնդրուկի հոտով տոգորուած մթնոլորդին, անօրինակ հանգիստ եւ ապահովութիւն կը զգայինք բոլոր շարիքներու դէմ եւ մեր մտածումները ժպտուն եւ խիզախ, կը ծաղկէին երբեմն արտասովոր, երբեմն նոյն իսկ այլանդակ, ջերմանոցի մէջ ծաղկած ծաղիկներու նման:

Ընթրիքը անցաւ ոգեւորութեամբ, երբ կրկին սրահ կը մտնէինք հարցուցի Սօֆիին:

Տիկին Դանիէլեա՞նը:

Շատ խնդրեցի որ գայ... յոյս ունիմ, բայց բացարձակ չի խոստացաւ. զարմանալի կին է:

Հետաքրքրական կին է:

Չեմ գիտեր ինչ, բայց մութ բան մը կայ իր կեանքին մէջ. բան մը որ ամենուն համար անթափանցելի է:

Բանբասանքը արգիլուած է, ընդհատեցի ժպտելով:

Երթանք իմ սենեակս, ըսաւ Սօֆի, որ հագուստը պիտի փոխէր:

Մութ կապոյտ թաշեայ շրջագգեստը հագնելով, Սօֆի դարձեալ խօսեցաւ տիկին Դանիէլեանի մասին:

Իմ վրաս մեծ տպաւորութիւն ըրաւ իր հանդարտութիւնը, ըսի: Տարօրինակ հանգստացնող բան կայ իր խաղաղ ժպիտին մէջ:

Կը կարծե՞ս որ այնքան ալ խաղաղ է. արդեօք դիմակ մը չէ՞ ատիկա ինձ կը թուի որ մեծ, մեծ անսահման տխրութիւն կայ իր մէջ... Բայց ինչո՞ւ ահա այդ ինչուն է որ անբացատրելի է:

Մեծադիր հայելիին առաջ՝ Սօֆի իր մազերուն խիտ հիւսքերը պսակի նման կը յարդարէր գլխուն շուրջ եւ պահ մը լուռ հետեւեցաւ իր արդուզարդին. յետոյ հակելով դէպ ինձ:

Գիտե՞ս...

Բայց ահա դռան զանգակը լսուեցաւ եւ ուշադրութեամբ ականջ դրինք գուշակելու համար թէ ո՞վ է եւ շտապեցինք երթալ հիւրասրահ:

Ժամը յառաջացած էր երբ տիկին Դանիէլեան երեւցաւ. հիւրասենեակին մէջ առանձին խումբեր կազմած հիւրերը կը վիճաբանէին ջերմօրէն զանազան խնդիրներու մասին: Ես ինքս բուռն վէճի բռնուած երիտասարդ գրողներու հետ կը ջանայի ցրուել անկեղծ ու երբեմն երեւութական սկեպտիկութիւնը որ այդ ժամանակէն առաջ հասունցած երիտասարդութիւնը պարտական կը համարէր ցուցադրել: Ամէն մէկը կարծես քննուած անկարելի բաղձանքներու դէմ՝ կ'ուզէին փառաւորուիլ իրենց անկարողութիւնով եւ ջանալ ստեղծել այն փղոսկրէ աշտարակը որը ես բանտ կը համարեմ իմ բաբախուն եւ անյազ մտածումիս համար:

Վիճաբանութիւնը ընդհատեցի եւ իմ ուշադրութիւնս ականայ կեդրոնացաւ տիկին Դանիէլեանի վրայ: Սեւ շղարշէ պարզ հագուստ մը հագած, մազերը ամփոփած գլխուն ետեւ անիկա կը յառաջանար բարեւելով. դէմքը ժպտուն եւ գոհունակ: Վարդի ծաւալող եւ թափանցող բուրմունք մը հետք կը մնար իր անցած տեղէն եւ իր ամէն մէկ քայլին բուրումի աւելի ուժգին ալիք մը կը բարձրանար տարածուելով:

Իր ետեւէն խօսելով մտան Հրանդ Չերքեզեան եւ տարեց պարոն մը: Կարծես փողոցի մէջ կը քալէին անուշադիր ամենուն բայց երբ օրհորդ Վառվառեան ընդ առաջ գնաց, Չերքեզեան սթափածի նման գլուխը բարձրացուց եւ իր աչքերը երկարօրէն եւ հիացումով ժպտեցան Սօֆիի գեղեցկութեան:

Տիկին Դանիէլեան ինձ մօտ եկաւ եւ բարեւելէ յետոյ կանգ առաւ եւ ըսաւ:

Ձեր ցուցահանդէսին համար կարգադրիչ յանձնախումբը կազմուեցաւ. նախագահն է Վահան Տիրան պէյ. շատ լաւ ընտրութիւն:

Խօսակցութիւնը անմիջապէս կեդրոնացաւ ինձ եւ պատկերներու վրայ:

Այտերս կ'այրէին տենդով եւ սրտիս մէջ տարօրինակ յուզումնք կար: Քանի քայլ առ քայլ կը մօտենանք այն օրուան երբ ինձ գործս դէմ առ դէմ պիտի գայ հասարակութեան հետ, անբացատրելի յուզում մը, գրեթէ երկիրներու մէջ ուր սակայն շատ աւելի դժուարահաճ եւ գիտակից մարդոց նայուածքը կ'անցնի ցուցադրուած պատկերներու վրայէն: Այնտեղ պարզ հետաքրքրութեան մը արժանանալը յաղթանակ մըն է, բայց այստեղ արդէն իսկ խնդիրը ուրիշ բան է. պիտի կարենա՞մ արդեօք դուրս գալ ինձ հոգեկան առանձնութենէս եւ վերստին կապել խզուած կապերէն մէկ քանին: Սրահը, ծաղիկները, Սօֆիին շնորհադէմքը, մարդոց գլուխները, տիկին Դանիէլեանի ժպիտը, ամէն ինչ իրար կը խառնուին, կը դառնան շուրջս, կարծես շփոթ երազի մը մէջ: Հոգոյս խորքերէն յուզումնքի անձանօթ ալիք մը կը բարձրանայ եւ մտածումս կը տարուբերէ: Յաջողութեան յոյսն է, թէ ուրիշ եւ անձանօթ բանի մը նախագագացումը: Չեմ գիտեր: Վերածնող եւ վերածաղկող հայ հասարակութեան մէջ կարող եմ մէկ օրէն միւսը առաջնակարգ դէմքերէն մէկը դառնալ... կարծես դարերէ ի վեր բռնութեան եւ ստրկութեան ճնշումին տակ հեծող ժողովուրդին ազատագրումի ճիչերէն մէկն է որ պէտք է արձակեն, ուժովը ինձ սեպհական տաղանդիս, ինձ ներքին եւ առանձին գօրութեամբս: Ու այդ գգացումը այնպիսի տարերային ուժով մը գիս կը վերացնէ որ բոլոր հաճոյքները եւ տխրութիւնները, կնոջ յատուկ փառասիրութիւնները եւ յուսաբեկութիւնները կը թուին ափ մը մոխիր, դէպի երկնակամարը սլացող բոցի մը շքեղութեան քով:

Իմ արուեստագետի հպարտությունս ամենագոր է այդ միջոցին եւ անտարբերութեամբ կը դիտեմ թէ ինչպէս մարդոց հիացիկ ուշադրութիւնը կեդրոնացած է իմ վրաս:

Ես եմ այլեւս կեդրոնական անձը. Սօֆիին գեղեցկութիւնը, տիկին Դանիէլեանի հրապոյրը անտեսուած են այդ թուային եւ բոլորն ալ շուրջս խմբուած կարծես ակրնկալու են իմ ակնարկիս ու ժպիտիս: Ինչպէս եթէ նոր յայտնուած ըլլայի, նայուածքները կը ծանրաբեռնուին զանազան զգացումներով. կզգամ որ իմ ամէն մէկ շարժումիս կը համապատասխանէ իրենց հոգեկան յուզումը: Արուեստը զիս կը զարդարէ ու լուսապսակ մը կը դնէ իմ շուրջս ու այլ եւս կարծես մէկ քայլս պիտի առնեմ փառքի ճանքուն վրայ:

Կը շարունակեն խօսիլ կարգադրիչ յանձնախումբի մասին: Յուզահանդէսը տեղի պիտի ունենայ Ալիանս ֆրանսէզի սրահներուն մէջ: Կը խօսին նաեւ յանձնախումբի նախագահի մասին: Վահան Տիրան պէյ ամաղէօր մըն է, նուրբ ճաշակի եւ բարձր դաստիարակութեան տէր, թողը յայտնի պետական անձնատրութեան, անիկա կը պատկանի կաթոլիկ ընտանիքի մը որ աւանդութիւնը ունի պաշտպան հանդիսանալ ազգային արուեստի բոլոր արտայայտութիւններուն:

Յանկարծ չեն գիտեր ինչպէս ուշադրութիւնը կը խզուի եւ նոր խօսակցութիւններ կը խմբեն մարդիկը: Տիկին Դանիէլեան պահ մը խառնուելէ յետոյ վիճաբանութեան մը նոր հրատարակուած բանաստեղծութեանց հատորի մը մասին, կը մեկուսանայ եւ ես ուշադրութեամբ կը հետեւիմ իրեն: Այս պահուս գլուխը թեթեւ մը հակած մէկ ուսին, կը նայի ժպտելով ու աչքերը իրենց շատ պայծառ նայուածքով, գորովագին եւ սիրագեղ, կարծես խոնար կը դառնան հետզհետէ: Իր քունքերուն նրբին փափկութիւնը ոչ մէկ կնճիռ ունի տակաւին, բայց տարիքին ազդեցութիւնը զգալի է ընդհանուր յոգնութեան արտայայտութիւնով որ շատ փափուկ եւ շատ նրբին դիրաբեկութեան տպաւորութիւն մը կ'ընէ: Դանդաղ քայլերով Չէրքէզեան մօտեցաւ անոր թիկնաթոռի յենակին եւ սկսան առանձին քանի մը խօսք փոխանակել:

Հետզհետէ տիկին Դանիէլեանի ձայնը իր կողմ հրաւիրեց ուշադրութիւնները, առանձին խօսակցութիւնները դադրեցան: Դարձեալ խօսքը եկաւ յանգեցաւ նոր

հրատարակուած բանաստեղծութեան հատորին վրայ: Տիկին Դանիէլեան երկար խօսեցաւ իր մտածումը ընդլայնելով: Ջինքը կը դիտէի մեծ ուշադրութեամբ: Անիկա կարծես կերպարանափոխ եղած էր. այս ոչ այն կինն էր, որ տեսայ նաւամատոյցը, ոչ այն կինը որ մտաւ սրահ այս իրիկուն եւ որ կարծես իր սեւ հագուստին մէջ կը սարսուար յուզուով: Այժմ հաստատ եւ հաւասարակշիռ ինացականութիւն մըն էր որ հեզասահ եւ դիւրին իր միտքը կը պարզէր, մեկնելով հաստատ հիմունքներէ եւ հասնելով տրամաբանական եզրակացութիւններու: Իր ձայնը յստակ, յուզումնալի, հաճելի էր լսել եթէ նոյն իսկ մտքին չի հետեւէինք: Լուսամփոփին վարդագոյն լոյսին մէջ ճակատը աւելի պարզ էր ու լուսաւոր եւ կարծես մագերուն ճերմակ թելերը իմաստ մը կստանային:

Անգամ մը եւս խորհեցայ: Ի՞նչ շռայլութիւն եւ պերճանք ամուլ մնացած: Այն բոլորը որ կայ արդէն այն բոլոր սերմերը որ պիտի ծաղկին, կարող են զարդարել դժուարահաճ ժողովուրդի մը գեղարուեստական կեանքը: Բայց այդ բոլորը ցրիւ են ու ամէն մէկը կղզիացած իր մէջ եւ գրկուած այն կենսահիթէն որ պիտի ուռճացնէր եւ ծաղկեցնէր այդ ընդունակութիւնները իրենց սկզբնական ուժին համեմատութեամբ:

Ու տխրութիւնը որ կը ծածանի դէմքերու վրայ կարծես բացատրելի կը դառնայ իմ մտատանջ հետաքրքրութեանս:

Սօֆի կարծես ցրուելու համար յայտնուող անձկութիւնը անցաւ դաշնակին առաջ եւ ահա մատները անցան ստեղնաշարին վրայէն: Ամենքն ալ լռեցին ու լսեցին:

Յանկարծ ինքզինքս զգացի յոգնած ու սպառած: Գլուխս կրթնցուցի թիկնաթոռին յենակին ու լսեցի. տարտամ երազանքի մը մէջ մտածումս կը թափառէր: Վարդի աւելի բարկ բուրմունք մը, եւ զգացի որ տիկին Դանիէլեանը կ'անցնէր մօտէս: Հեռուն վարագոյրի մը ստուերին մէջ Չերքեզեանը կեցեր էր առանձին ու յանկարծ անդրադարձայ որ ոչ մէկ բառ չարտասանեց անիկա... ինչո՞ւ այնքան խիստ է ամէնուն նկատմամբ եւ արդեօք ճնշուած չէ խղճահարութենէ... ինչո՞ւ անբացատրելի է տիկին Դանիէլեանի վարմունքը այն անձին նկատմամբ որուն վրայ Սօֆին խօսեցաւ ինձ: Ինչքան բարդ է ամէն ինչ ու խորախորհուրդ եւ ինչքան ծալքեր ունին հոգիները այս զարմանալի քաղաքին մէջ... եւ նոյն ինքս

ես... ինչո՞ւ գուարթ էի այնքան եւ հիմակ կարծես պիտի արտասուեմ. ջիղերս յուզուած սրահին գերագրգռուած մթնոլորդէն, երաժշտութենէն եւ այդ վարդի բուրումէն, որով կարծես այլ եւս յաւետ ամէնքս ալ արբեցած պիտի մնանք:

Վարագոյրին ստուերին մէջէն Չերքեզեան կու գայ դէպ ինձ: Երաժշտութիւնը լռեց:

Կ'ուզե՞ս երթանք, ես քեզ կ'ընկերանամ, ուշ է արդէն:

Տիկին Դանիէլեան մեր կողմը կը բնակի ու երեքով կը մեկնինք:

Այգը նոր բացուեր է եւ Ս. Խաչ եկեղեցիին զանգակը կը դողանջէ. օդին մէջ կնդրուկի հաս կայ եւ շունչս կը բեռնատրուի բաց պատուհանէն ներս խուժող արեւով, լոյսով եւ բուրմունքով: Շատ կանուխ արթնցեր եմ եւ տենդագին յուզումով, կարծես դրդուած ո եւ է վտանգէ, իմ ինքնանկար պատկերիս առաջ կեցած, կը նայիմ: Ես եմ ու ես չեմ. կարծես հին ժամանակներու կին մըն է որ կը ժպտի ինձ շրջանակին մէջէն: Այսու ամենայնի ոչ միայն իր սիլուէթը ընտանի է ինձ, այլ նաեւ իր հոգին: Անսահմանելի ժամանակներու ընթացքին այդ մարդկային երեւոյթը կարծես ձեւատրուած ու անհետացած է գալ յանգելու համար իմ սեպհական ձեւիս որը սակայն վերջնականը չէ անշուշտ:

Կրցեր ե՞մ սեւեռել աշքերուս գոյնը որ այնքան փոփոխական է, երբեմն մթին, գրեթէ սեւ եւ երբեմն այնքան պայծառ որ այլ եւս գոյն չունի: Հագուստիս կանանչորակ կապոյտ ծալքերը, որոնց երանգը ստուերի մը պէս կը կրկնուի աշքերուն մէջ, իմ պատկերիս կու տայ բիզանդացի իշխանուհիի մը երեւոյթը. մանաւանդ որ անիկա նկարուած է հիւանդութենէ մը ետք եւ այդ հիւծուած դէմքը, լայնաբիբ, վերելէն կամարացող բարակ յօնքերով կը շեշտէ այդ տպատրութիւնը, բայց շրթները չունին հնամենի պատկերի մը դալուկը եւ անոնց վրայ կը թափառի կարօտը ու տեսակ մը բաղձանք, անձկալի ու զարմացած ինչպէս դէմքը կնոջ մը յուզումնալի օրուան մը վաղորդայնին: Դէմքը կնոջ մը որ անդունդի մը խորքերը սուզուած է եւ որ ամէն բան տեսած ու ամէն բան լսած ըլլալով կը բարձրանայ դէպի գագաթնակէտ մը:



Եթէ կարենային տեսնել այն բոլորը որ ուզած են դնել այդ պատկերին մէջ եւ շատ չի գբաղէին գիծերու կամաւ յառաջ բերուած անկատարութիւնով, եթէ կարենային ընդնշմարել այն տանջանքը, հայրենաբաղձութիւնը որ գալարած է միշտ հոգիս եւ ոչ թէ երիտասարդ կինը. ֆիզիքական անձը, կարող եմ յուսալ:

Եկեղեցիին զանգակները միշտ կը դողանջեն ու կարծես կը լսեմ առաւօտեան աղօթքը «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար... առ իս լոյս ծագեա...»:

Մեծավայելուչ գեղեցկութեան մը զգացումը կ'ողողէ զիս այգուն պայծառ լոյսին մէջ եւ ամէն ինչ կարծես ուրիշ կերպարանք կ'ստանայ իմ շուրջս:

Սրահին մէջ կը թափառիմ մէկ պատկերէս միւսը: Ահա մեծ գիղանկար մը, հարթ տարածութեան մը վրայ որ երկուքի բաժնուած է հեռաւորութեան մէջ կորստող ուղիով մը, առանձին նոճի մը կը բարձրանայ գագաթը թեթեւ մը հակած: Ու այդ նոճին ալ դարձեալ ես եմ անվերջ ճանքուն վրայ կանգնած, ճանքայ որ կը կորստի անորոշ հեռաւորութեան մէջ եւ որ ոչ մէկ հանգրուանի կը հասնի: Ես եմ դարձեալ ու իմ հոգիս, զարնանային սա պատկերը ուր նշենիները կը ծաղկին ամպերով բեռնաւոր երկնքին ներքեւ: Ես եմ թափառական նաւակը ծովուն մէջ, որուն կոհակներուն վարդագոյն փրփուրները կարծես կը ծաղկին ու կը թառամին, անվերջ մինչեւ լեղակագոյն հորիզոնը որուն վրայ կարմիր ամպ մը կնճիռի մը նման կ'երկարի: Ես եմ սա կինը պատուհանին առաջք ակրնկալու իր անգրաւելի երագին, կոնակը դարձուցած իր սենեակի շքեղ հանգստաւէտութեան: Ու իմ հոգիս իր բազմադիմի երեսակներով կը փորձէ արտայայտուիլ եւ պատկերանալ. բայց նաեւ ամէն մէկ նկարիս վրայ տխրութիւնը կայ անկարողութեան, որովհետեւ այդ բոլոր տակաւին չեն լսած համադրական խօսքը որ կը կրեմ իմ խորքիս մէջ, ու ամէն ինչ համը է ու մշուշոտ, ինչպէս ամպամած առաւօտը ուր տակաւին արեւը չէ ծագած:

Հիւանդագին սարսուտ մը, սարսուտ յոգնութեան եւ յուսաբեկութեան կը համակէ զիս ու կը նստիմ թիկնաթոռիս մէջ, երեսս դարձուցած պատուհանին, ուրկէ դուրս՝ ամենագոր բնութիւնը իր այլազան, շքեղ եւ լուսաւոր գեղեցկութեամբը կը պատասխանէ իմ անձկութեանս:

Փառատենչութեան տագնապներ, հաւատքով լիքը սլացումներ եւ արտաբերութիւն... Ահա իմ կեանքս: Ինչո՞ւ նման չեմ ուրիշ կիներու եւ ինչու չեմ ճաշակեր անդորր խաղաղութիւնը այնքան ուրիշներու որոնք կը ծնին, կ'ապրին եւ կը մեռնին ինքզինքին անգիտանալով: Ռ՞որկէ եկեր է ինձ այս ճաշակը անկարելիին որ զիս կը պահէ մշտնջենական յուզումի եւ անհամբերութեան մէջ, այնպէս որ երբեմն ես ինքզինքիս կը հարցնեմ. ինչո՞ւ տխուր եմ, կամ ինչո՞ւ ուրախ եմ այսքան: Կարծես իմ հոգոյս խորհուրդին մէջ տեղի կ'ունենան յաջողութիւններ կամ պարտութիւններ որոնց յետին ալիքները կը հասնին ինձ:

Պատճառը թերեւս մանկութիւնս էր որ անցեր է ջերմ եւ գորովալի շրջանակի մէջ: Ջիս մեծցուցեր են ինչպէս իշխանուհի պահպանելով զիս իրական կեանքի բոլոր կարծրութիւններէն: Երբ առաջին անգամ աշխարհիս խիստ շունչը զգացի, նման էի ջերմանոցի մէջ ծաղկած ծաղիկի որ կ'ենթարկուի արտաքին աշխարհի կլիմայական խստութիւններուն:

Գուրգուրանքի եւ անսահման սիրոյ այդ տաք շրջանակը իմ մէջս զարգացուց զգացողութեան այն հիւանդագին նրբութիւնը որ զիս կը դարձնէր մշտնջենապէս անհանգիստ, անձկալի եւ իմ մէջ յառաջ բերաւ անմիջական նպատակներէն անդին ձգտելու ջերմեռանդութիւնը: Այս հոգեկան տրամադրութիւնը աղբիւրը եղաւ իմ ամենամեծ ուրախութիւններու եւ դժբաղդութիւններու: Չերժ ամէն կարգի անմիջական հոգերէ, շրջապատուած նախատեսնող եւ մանրակրկիտ խնամքով եւ կորսնցուցի իրական կեանքի զգացումը եւ միտքս ու երեւակայութիւնս վարժութիւնը ստացան ազատօրէն սլանալու դէպի վերացական ոլորտները երազներուն: Այսպէս է որ նրբազգած եւ անզէն յանկարծ դէմ առ դէմ գտնուեցայ կեանքի բիրտ անհրաժեշտութեանց, հոգիիս խօրքը պահելով կարօտը ոչ թէ անցեալ հանգիստ կեանքին այլ այն երազներուն որ այդ շրջանին կազմեր էի եւ որ աւելի իրական կեանքն էր ինձ համար քան կեանքն իսկ:

Այդ բոլորին հետեւանքն էին այն ոգեւորութիւնը, այն անխոնջ աշխատութիւնը որով փարեցայ արուեստին: Այդտեղ արդէն կը փորձէի մարմին տալ իմ երազներուս, այդտեղ իմ հոգեկան տրամադրութիւններս գիծեր ու գոյներ կստանային եւ իմ ներքին եւ ինձ համար իսկ անընթացն էին ներդաշնակութիւնը կը

փորձեր արտայայտուիլ:

Գտնել մարդոց հոգիներուն ճամբան, դառնալ հաղորդական, իմ երագիս եւ յուզումիս կշռոյթը տալ իրենց անձեւ եւ անգոյն զգացումներուն. դառնալ ղեկավարը ցրուած եւ առանձինն հնչող երգերուն, ձեռք առնել անտեսանելի եւ ամենագոր տիրապետութիւնը արուեստագէտին, դառնալ գազաթներէն մէկը, որ կը բարձրանան մարդկային մակարդակէն վեր եւ որ կը համարեն իրենց մէջ ոչ միայն ամբողջութիւնը ներկայ կարելիութեանց, այլ եւ այն ինչ որ պիտի գայ, այն որ գալիք սերունդներուն կը պատկանի եւ որ տակաւին տարտամ, անձեւ ու անկարելի երագ է բազմութեան համար:

Ի՞նչ բանի վրայ հիմնուած է այս փառատենչութիւնը եւ ինչով կարող են արդարացնել զայն: Միթէ նման են այն սնապարծ եւ փքացած մարդոց որոնք չեն գիտեր իրենց տկարութիւնները եւ ներողամիտ են իրենց անկարողութեանց համար: Երբէք ոչ ոք այնքան յստակ եւ այնքան անողորք կերպով չի կարող տեսնել իր տկարութիւնները եւ յուսահատիլ որքան ես: Բայց ես անվերջ պայքար մը պարտադրեր են ինքզինքիս: Ինչո՞ւ... ո՞վ կը հարկադրէ զիս, իմ անսահման տենչա՞նքս... թերեւ: Սակայն եղեր են ժամեր որ ուզեր են անկեղծօրէն ազատագրուիլ այդ հարկադրութենէն եւ իմ իդէալիս ցրտին առանձնութենէն իջնել ու խառնուիլ հասարակ մարդոց մէջ, զգալ իրենց ուրախութիւնները, իրենց համեստ յաղթանակները, ապրիլ ու մեռնիլ ինչպէս այնքան ուրիշներ, սեղմելով հորիզոնը իմ իդներու:

Բայց կարծես ինձմէ անկախ եւ ճակատագրական բան մը կայ իմ մէջ, կոշտ մը այն դժուարին դերին որ կը կարծեն թէ պարտական են կատարել: Ասիկա անդարմանելի հոգեկան վիճակ մըն է որուն ծագումը ինձմէ կը խուսափի եւ որուն թելադրած պայմաններուն գրեթէ անգիտակցաբար կը հնազանդիմ: Ու ես հպարտ եմ ու իմ եսս կզգամ առանձին ու զօրեղ որուն երբեմն կը նայիմ հիացումով, երբեմն վախով եւ երբեմն ալ անձկութեամբ:

Դժուար է բացատրել հպարտութեան եւ խոնարհութեան այն խառն զգացումը որ կը բղիսի կոշտմէս եւ իմ միջոցներու անկատարութենէն: Երբեմն ինձ կը թուի որ անձանօթ եմ ինքզինքիս, թէ իմ խորքերու մէջ կան զօրութիւններ որոնք երկնչելի են քանի որ անյայտ են. երբեմն կզգամ որ անյատակ վիհեր կան հոգոյս մէջ

որոնց ափին կեցած կը սպասեն յայտնութիւններու ու դիւրին ուրախութեանց եւ դիւրին տխրութեանց բոլոր դռները կը փակուին իմ դէմ:

Այսու ամենայնի, տկարութեան եւ սրտաբեկութեան ժամերու, ձայն մը ինձ կը մըննջէ:

- Ինչո՞ւ... թերեւս այդ բոլորը պատրանք է, ցնորք ... ունայնամտութիւն եւ կամ պարզապէս գերագրգռուած երեւակայութիւն: Ինչո՞ւ մեկուսանալ քու կոչումիդ մէջ եւ ինչո՞ւ երթալ անմատչելի փառքի ետեւէն: Երիտասարդ ես ու գեղեցիկ ու կեանքը ծաղկեալ պարտէզներ ունի անոնց համար որ երկրիս վրայ կը քալեն ու թեւաբախումներ չունին դէպի անկարելի հորիզոնները:

Ու այդ փորձութեան ժամերուն կը տեսնեմ սիրագեղ գոյգ մը որ վարդերով ծաղկած պարտէզի մը արեւոտ արահետին վրայէն կ'երթան ձեռք ձեռքի, իրարու մըննջելով գորովագին խօսքեր:

Մայիսեան լուսայեղ օր մըն է. արդէն տաքերը սկսեր են ու արեւի ճառագայթներու մէջ որոնք լուսեղէն սիւներու նման կը մտնեն սենեակ վարագոյրներու ընդմէջէն, գոյնգոյն բզէզներ դարձդարձիկ կը պարեն, անընդհատ բզզալով:

Այսօր վարդի անուշ կը պատրաստեն տան մէջ եւ մօրաքոյրս պատարագ ընելու պատրաստուող եպիսկոպոսի լրջութեամբ, ամբողջովին ճերմակ հագած, զբաղած է այդ բարդ ու նուրբ գործով: Բազմոցի վրայ, որ ճերմակով ծածկուած է ամբողջովին, վարդերու դէզեր կը կուտակուին, բաժնուած իրենց լաւութեան աստիճանով: Կան որ անուշ պիտի դառնան, նուազ լաւերը օշարակի պիտի գործածուին, իսկ թերթիկներու աւելորդ մասերը, շատ մանր թերթիկները պիտի ծառային վարդօղի պատրաստելու:

Մօրաքոյրս իր ակնոցները դրած աչքին, ճերմակ եւ ճապուկ մատներով, մկրատով կը կտրատէ թերթիկներու ճերմակ մասերը եւ վարդագոյն ու բուրու մնաւէտ կոհակը կը բարձրանայ ափսէին մէջ:

Ոչ միայն սենեակը, այլ ամբողջ տունը եւ նոյն իսկ փողոցը լեցուած է վարդի բուռն եւ թափանցող հոտով: Բուրմունքի գերազրգուծութիւն մըն է ուրկէ նոյն իսկ թեթեւ մը թունաւորուած, գլխու պտոյտ ունի սպասուիին, օգնող կինը եւ մօրաքոյրս ինքն իսկ ստիպուած է երբեմն ընդհատել աշխատութիւնը եւ սրահէն դուրս ելնել, շունչ առնել: Բայց վարդի հոտը կը տիրապետէ ամենուրեք, սանդղոյներուն վրայ, խոհանոցը՝ ուր արդէն մէկ մասը կ'եփուի լայնաբերան պղինձներու մէջ:

Բագնոցին վրայ, մօրաքրոջս դէմ ծալլապատիկ նստած, յիշելով անցեալ եւ մանկական օրեր կը հետեւիմ այդ նուրբ եւ գեղեցիկ աշխատութեան: Անիկա գործ մըն է որ կը պահանջէ ճաշակ, փորձառութիւն եւ համբերութիւն եւ որը ունի իր յաջողութիւնները եւ անյաջողութիւնները:

Պէտք է որ վարդը պահպանէ իր հում բուրուրը: Միայն փորձ տանտիրուիները գիտեն այն ճիշդ բոլակներու գաղտնիքը որով վարդի թերթիկները պիտի խառնուին որոշ չափով շաքարի խտացած օշարակին եւ որը կը կատարեն բնագոյով եւ կեդրոնացած ուշադրութեամբ: Մօրաքոյրս լինէ է եւ մտախոհ, չի սիրեր որ զինքը ընդհատեն, կամ իր ուշադրութիւնը դարձնեն ուրիշ նիւթի վրայ եւ իր լուծութիւնը կ'ընդհատէ միայն հապճեպ եւ կտրուկ հրամաններ տալով:

Վարդին գոյնը պահպանելն ալ մեծ հոգ է եւ այդ մասին զանազան կարծիքներ կան: Մօրաքոյրս շուգեր փորձել նորութիւններ եւ կը հետեւի ասանդութեան. կը կատարէ ամէն ինչ այնպէս ինչպէս իր մայրը, իր մեծ մայրերը:

Աստիճանաբար խոր եւ գոգաւոր ամանին մէջ հաւաքուած ու ստկուած թերթիկները կ'ողողէ լեմոնի ջրով ու աչքի ու ձեռքի չափող, ճարտար շարժումներով կը կատարէ այդ բոլորը ընկղմած իր գործին նրբութեան մէջ:

Օշարակի պատրաստութիւնը նուազ խնամք պահանջելով կը յետաձգէ, եւ ես չեմ կրնար առանց որոշ հիացումի հետեւիլ այդ աշխատութեան նրբութիւններուն:

Դուրս ելիր, մի մնար այստեղ, կ'ըսէ մօրաքոյրս, մտահոգ՝ իմ մասիս:

Ընդարձակ սրահին մէջ ուր պատկերներս դրեր եմ, վարդի հետապնդող բուրմունքը զիս կը տոգորէ եւ կարծես շնչած օդս կը ծանրանայ, զիս կ'արբեցնէ: Գլխու պտոյտ, յանկարծական տկարութիւն, ջլատում ծունկերուս մէջ եւ ահա հայելին կը ցոլացնէ դէմքս տժգոյն եւ ճերմկած, մինչ աչքերս կը վառին տենդով:

Արագ, արագ կը հագուիմ ու դուրս կու գամ տունէն եւ Պաղլար պաշիի լայն փողոցին մէջէն յառաջանալով կը կրթնիմ արեւանոցիս վրայ որովհետեւ տկարութիւնս չի անհետանար տակաւին արեւին եւ բաց օդին մէջ եւ ռունգերուս մէջ կը կրեմ արբեցութիւնը վարդի բարկ բուրմունքին:

Ամբողջ թաղը լիքն է այդ հոտով: Վարդերու եղանակն է եւ շատ տուներէ հետզհետէ աւելի թեթեւ աստիճանով կ'արտաշնչուի անիկա: Կիսաբաց դռներէ, բաց պատուհաններէ գաղջ եւ բուրումնաւետ ալիքը կը տարածուի մթնոլորդին մէջ եւ բզէզներ հրապուրուած իրենց այդ նախասիրած ծաղիկէն կը բզզան արեւին մէջ, կը թափառին ամենուրեք իրենց բնագոյով փնտռելով ուղղութիւնը վարդերուն որ կը դիզուին, բազմոցներու վրայ, ափսէներու մէջ, սեղաններու մակերեսին:

Այսօր ինձ մօտ այցելութեան պիտի գայ Վահան Տիրան պէյ, կարգադրիչ յանձնախումբին նախագահը:

Արագ այցելութիւն մը օրիորդ Վառվառեանին, որուն հետ դուրս կուգանք եւ կ'անցնինք ծաղկաւետ դաշտերուն մէջէն մինչեւ բարձունքը. կը հանդիպինք տիկին Դանիէլեանին, որ գիրք մը ձեռքը նստած է արեւին մէջ, գետնին վրայ, ծառի մը բունին կրթնած: Շուքին մէջ կաթնային լոյս մը կ'ողողէ մեզ որը կը դողդղայ արեւի լայն արատներով: Մենք ալ կը նստինք գետնին ու չենք կարող խօսիլ, անձնատուր լոյսի եւ տաք մթնոլորդի հեշտաւետ ազդեցութեան:

Կ'առաջարկեն աւելի հեռու երթալ մինչեւ Պուլկուրլուի աղբիւրը, բայց ես կը շտապեմ տուն դառնալ որովհետեւ պէտք է պատրաստուիմ հիւրս ընդունելու:

Հապճեպ կերպով կը ճաշենք որովհետեւ մօրաքոյրս տակաւին բոլորովին չէ ասարտած գործը:

Յաջող է, կը հարցնեն:

Մօրաքոյրս կը վարանի հաստատ բան ըսել, թէն դէմքը կը կրէ դժուարութեան  
ւնը յաղթողի գոհունակութիւնը:

Տակաւին տար է, կարելի չէ հասկնալ, կ'ըսէ, բայց կարծեմ յաջող է:

Բիւրեղեայ պզտիկ ամաններու մէջ, սպասուիին կը բերէ վարդի անուշը որպէսզի  
ճաշակենք:

Հիանալի է, ուտել չէ ասիկա այլ զգալ. իրացնել ինչ որ կայ մեր զգայարաններու  
համար ասելի անշօշափելի եւ խուսափուկ. բուրում եւ երանգ:

Անուշ չէ այլ բանաստեղծութիւն, կ'ըսեմ մօրաքրոջս որ յանկարծ  
գոհունակութենէն կը ժպտի իր բարի եւ թառամած դէմքը դարձուցած ինձ որուն  
վրայ աչքերը տակաւին գեղեցիկ են, լոյսով եւ իմաստութեամբ լեցուն:

Յետոյ կը խօսինք Վահան Տիրան պէյի մասին:

Տիրան պէյի ընտանիքը ծանօթ է իրեն ու նոյն իսկ հին ժամանակները,  
մօրաքրոջս երիտասարդական օրերուն իրենց ընտանիքները յարաբերութեան  
մէջ եղած են: Ինձ կը պատմէ այդ ընտանիքին եղերական պատմութիւնը:

Տիրան պէյի մեծ հայրը ազդեցիկ եւ հարուստ չէլէպի, հայ կաթոլիկ, կաթոլիկ  
հասարակութեան ղեկավար անդամներէն մէկն էր երբ կ'ենթարկուի Աւետիք  
Պատրիարքի հալածանքին: Հայ պատրիարքարանը անգօր զգալով ինքզինքը  
զսպելու կաթոլիկութեան տարածումը կը դիմէ բռնի եւ խարդախ միջոցներու:  
Աւետիք Պատրիարք Սուլթանը կը շահի իր կողմը հաւաստիացնելով որ կաթոլիկ  
հայերը Եւրոպական պետութիւններու գործակալներն են եւ Օսմանեան  
պետութեան դաւաճաններ: Բանադրանքներէն եւ բարոյական պատիժներէն  
յետոյ արհունարբու պատրիարքը զօրացած կառավարութեան բիրտ ուժով  
հրամանագիր ւնը կ'արձակէ որով ամէն մէկ կաթոլիկ հայ պէտք էր ներկայ ըլլար  
յառաջիկայ կիրակի պատարագին լուսաւորչական եկեղեցիի մէջ գոջացողները  
ընթոստներէն որոշելու համար:

Բռնաբարուած իրենց խղճի ազատութեան մէջ հայ փոքրաթիւ հասարակութիւնը  
որ Պոլսոյ ամենէն քաղաքակրթուած եւ լուսաւորուած հատուածն էր այն

Ժամանակ, որ երկարատեւ եւ անարդար հալածանքներու հետեւանքով ստացած էր հոգեկան եւ քարոյական որոշ քարձրութիւն, կը հաւաքուի իր երեւելիներուն տուները ուր ներկայ կ'ըլլայ թիւ պատարագին:

Այս կրատրական դիմադրութեան հետեւանքը կ'ըլլայ խմբական արտոյ, իրաւագրկութիւն, բանտարկութիւն եւ այլն: Բազմաթիւ մեծամեծներու տուներ կը սնանկանան, պաշտօնատարներ կը վտարուին եւ ամէն հայ կաթոլիկ տուն կունենայ իր արտոյեալը եւ բանտարկեալը: Տիրան պէյ իր երկու եղբայրներով, անմիջական յարաբերութեան մէջ ըլլալով ֆրանսական դեսպանատան հետ, կը կրեն ամենէն ծանր պատիժը: Հարուստ, ապրած շռայլ եւ վայելուչ կեանքով, յղփացած արքունական պատիւներով, կը նախընտրեն կորսնցնել ամէն ինչ եւ մերժելով ներկայանալ աններող պատրիարքին, կը դատապարտուին մահուան: Իրենց անշարժ կալուածները յարքունիս կը գրաւուին եւ իրենց ընտանիքը ու զաւակները մէկ օրէն միւսը կը կորսնցնեն ամէն ինչ պահելով մի միայն իրենց անունը, սրբագործուած նահատակութեամբ:

Կատքը կեցաւ դրան առաջ եւ վարագոյրին ընդմէջէն հագի տեսայ հիւրին սիւուէթը:

Հիրասենեակին մէջ ծանօթացանք իրարու: Երկայն, խոհուն եւ քիչ մը երկար տեւող նայուածքով մը նայեցաւ ինձ մինչ ես կը ժպտէի: Այդ պահուն մտածեցի:

Ինչքա՛ն մերկ է այս սրահը, կարծես կահաւորուած միմիայն գորգերով: Պէտք է փոխել այդ բոլորը:

Ես եւ Տիրան պէյ կեցեր էինք դէմ առ դէմ եւ շուրջս այնքան մերկ ու ընդարձակ կը թուէր ինձ որ կարծես կը կորսնցնէի իմ վարմունքիս ու շարժումներիս ազատութիւնը:

Տած բազմոցին վրայ նստեցայ, որը մօրաքոյրս ծածկեր է հնամենի լահոռի շալով ի պատիւ մեր ազնուական հիւրին: Ձեռքերս միացուցած թեթեւ մը քարձրացուցած աջ ծունկիս վրայ կը լսէի զինքը: Գիտեմ որ ներդաշնակ անբողջութիւն կը կազմեն, լահոռին գունեղ խորքին վրայ, իմ մութ կապոյտ հագուստով որուն վիզը եւ թելերը բաց են ու մազերս յարդարած այնպէս որ դէպի



գագաթս քարձրացող կոհակները, գիտեմ, պէտք է փալփիւան յետ միջօրէի ուժեղ լոյսին մէջ:

Արեւը մինչեւ կէս օր սենեակը ողողելէ յետոյ հիմա անհետացած է տանիքին ետեւ եւ զարմանալի ստուեր մը կայ սրահին մէջ որովհետեւ կարծես թէ պատերը, գորգերը, ու ամէն ինչ տակաւին կ'արտացոլեն իրենց մէջ ամբարած արեւի ճաճանչներու շողշողուն լոյսը: Այդ պատճառով է թերեւս որ անակրնկալ կերպով ցոլք մը կը թրթռայ ու կը մարի. կամ երանգ մը աւելի ուժգին կերպով կը ներկայանայ մեր տեսողութեան: Յանկարծ ծաղկամանին մէջ բացուող վարդը կարմիր, շատ կարմիր թերթիկները կը թափէ գետին կամ պատը ծածկող գորգին նկարներէն մէկը կ'անշատուի կարծես խորքէն ու իր նախշուն գիկզակով կ'ընկերանայ մեր նայուածքին ու կը մարի... տարօրինակ ընդարմացում մը համակած է զիս ու երագի մէջ եմ կարծես... խօսակցութիւնը դանդաղ է ու դժուարաւ կը պահպանենք անոր ընթացքը: Չիրար կը դիտենք անտարակոյս. կ'ուզէի իր պատկերը նկարել: Ահա այդ է, կը մտածեմ, իմ մտազբաղութեանս պատճառը: Կ'ուզէի այդ դէմքին գաղտնիքներուն եւ անօրինակ հրապոյրին թափանցել ու ինձ կը թուի որ աչքերս փակ ու մտքովս աւելի յստակ պիտի տեսնեմ զինքը:

Առաջին հանդիպման յատուկ սովորական խօսակցութիւնը վերջ կը գտնէ երբ մօրաքոյրս կը մտնէ սրահ: Հագեր է իր մեծ օրերու սեւ հագուստը որը զարդարուած է նրբակերտ բանուած ճերմակ օձիքով եւ թեւոցներով: Իսկապէս վայելուչ ձեւ եւ քալուածք ունի անիկա իր ճերմակ տակաւին առատ եւ թեթեւ մը զանգուր մագերով. իր մեղրամոմի գոյն թառամած մորթով որուն վրայ կը բացուին սեւ աչքերը: Ընդունելութեան յատուկ ձեւ ունի որ կը վերապահէ այն հիւրերուն որոնք կարող են գնահատել իր շնորհքը եւ վայելչութիւնը, հին օրերու սովորութեանց յատուկ:

Քանի մը յոպէէն կը ներկայանայ անուշի ափսէն արծաթ դրուագուած աննշմարելի կապոյտով եւ վարդի անուշը կը յաղթանակէ, սաքսի լուսանցիկ ընդունարանին մէջ, իր երանգով եւ բոյրով:

Մեծավայելուչ եւ հանդիսատր բան մը կայ այդ բոլորին մէջ եւ երբ Տիրան պէյ եւ մօրաքոյրս զբաղած են իրենց հօրենական յարաբերութեանց յիշողութիւնները

թարմացնելու, ես ազատ այլ ես, կը դիտեմ հիւրս:

Տիրան պէյ այնպիսի մարդ մըն է որ բազմութեան մէջ կարող էր անցնել առանց ուշադրութիւն հրաւիրելու, որովհետեւ իր անձին ու մասնատրաբար իր դէմքին առանձնայատկութիւնները զգայուն կարող են դարձնել միմիայն նրբաճաշակ մարդիկը: Միջինէն քիչ վեր հասակով եւ նիհար, վայելչակազմ առանց սեթեւեթի, խարտեաշ որ սկսած է ճերմկիլ, նրբագիծ եւ դժգոյն՝ թերեւս այն արեան պակասութեան պատճառով որ յատուկ է մայրաքաղաքացի հին ընտանիքներու սերունդներուն, դէմքին վրայ կը կրէ ազնուական յոգնութեան դրոշմ մը: Իր մանր եւ դեղին աչքերը որոնց շատ մօտէն կ'ընկերանայ խարտեաշ յօնքերու գիծը, ծածկուած են ոսկիով շրջանակուած ակնոցներուն ներքեւ: Ճակատը լայն, կարծես պրկուած, առանց խորշոմի, քունքերուն վրայ կ'ստանայ այնպիսի թափանցկութիւն որ երակներուն ցանցը նշմարելի կը դառնայ: Դէմքին քիչ երկար ձուածելը կը վերջանայ պզտիկ մօրուքով մը որ այլեւս ալեխառն է: Արծուային քիթը նուրբ ոնգունքով դէմքին կու տայ իր վերջնական նկարագիրը մինչ փոքր պեխերուն ներքեւէն անթերի գիծով շրթները, շատ թարմ, շատ մաքուր, ժպտուն եւ ճկուն զարմանալի զգացում կը ներշնչեն մտերմութեան եւ գորովանքի:

Անտարակուսելի է որ այդ նրբութեան եւ ուժի խառնուրդը այդ վայելուչ պարզութիւնը արտայայտութեան եւ խօսքի ներդաշնակ դիրութիւնը չէին կարող անտարբեր թողուլ ռեւի է նրբաճաշակ կին բայց ինչ որ իմ ուշադրութիւնս կը հրաւիրէ ուրիշ բան է: Տարօրինակ հանգստի ու ներքին ներդաշնակութեան զգացում մը ունիմ: Կարծես բոլոր խռովայոյց ձայները լռած են իմ մէջ, այն թռչկտող անհամբերութիւնը որով միտքս մէկ կէտէն միւսը կ'ոստնէ. որ թոյլ չիտար ինձ պահ մը կանգ առնել տպատրութեան մը վրայ. դադրած է այս միջոցին: Ամէն բոպէ կարծես կ'ուզեմ ըսել... ահա այսպէս... ճիշդ այսպէս... խօսքը, ձայնը, շարժումը, շրթունքին ժպիտը, խոհուն եւ երագուն նայուածքը, ամէն ինչ կարծես կը համապատասխանեն իմ ներքին եւ թաքուն ներդաշնակութեան որ կարծես յայտնուեցաւ ահա այս բոպէիս...

Ուրա՞խ եմ... չեմ կարող ըսել, բայց տեսակ մը հաճելի թմրութիւն գրաւած է զիս, ուղեղս չի գործեր այլ ես, կամ կ'անջատուի ներքին եւ անբացատրելի զգացումէ

մը եւ իր հակակշռի ուժը կը կորսնցունէ: Բնագոյական եւ անդիմադրելի հաճոյք մըն է որ կը գրաւէ զիս, անսանձ բայց տակաւին ցրիւ, որ տակաւին չէ տիրապետած ինձ բայց ուրկէ խուսափելու ոչ ուժ ունիմ, ոչ բաղձանք:

Տիրան պէյ յանկարծ ինձ կը դառնայ:

Քանի որ տակաւին լոյսը չէ փոխուած, կ'ուզե՞ք Տիկին, տեսնենք ձեր պատկերները:

Անսպասելի վախ մը կը գրաւէ զիս ու նաեւ տեսակ մը անօթխածութիւն: Իմ գործս, իմ հոգոյս երեսակներուն արտայայտութիւնը, սահմանուած մարդոց բազմութեան ցուցադրուելու, պիտի ուզէի քողարկուած պահել այդ մէկէն եւ աստիճանաբար յայտնել զայն: Ատկէ զատ ուրիշ զգացում ալ կայ. ես որ բաւական գրահատրուած եմ մարդոց կարծիքին դէմ եւ հասած եմ արդէն որոշ անտարբերութեան, յանկարծ մանկան պէս կը դառնամ դողահար եւ վարանոտ եւ աչքերս կը խոնարհեն գետին որպէս զի չի յայտնուի իմ շփոթութիւնս...

Այսու ամենայնիւ կ'անցնինք սրահ. բաղդը ինձ օգնութեան կը հասնի: Օրիորդ Վառվառեան կու գայ այդ միջոցին, կ'ուզէ ինքն ալ ընկերնալ Տիրան պէյի այցելութեան: Ուրախ է, ժպտուն եւ թեթեւ՝ թիթեռնիկի նման: Իր լաւ տրամադրութիւնը կը համակէ մեզ եւ թէեւ խորքերուս մէջ կը մնամ վրդովուած բայց կը յաջողիմ ստանալ որոշ կեցուածք եւ երբ Սօֆի թես մտած կը քաշքշէ մէկ պատկերէն միւսը, ընդհատելով իր հարցումները եւ դիտողութիւնները զուարճալի պատմութիւններով, բանբասանքներով, հեզնութեամբ, կը խնդամ իրեն հետ ջղային կերպով բայց հոգիս լի է անձկութեամբ, խռովքով եւ յուզումով:

Ի՞նչ ունիս այսօր, հիւանդ ե՞ս Էմմա, կ'ըսէ յանկարծ Սօֆի:

Տիրան պէյ կը դառնայ մեր կողմ, արեան ալիք մը կը բարձրանայ դէպի դէմքս: Այդ միջոցին երեկոյեան լոյսը կը դողդողայ հարաւային քամիէն որ յանկարծ կ'անցնի վարագոյրները դողդողացնելով: Տան վրայ մագլցած կլիսիներու բուրմունքը կը շնչենք լիաթոք... տենդագին յուզում մը կը սարսռայ միջոցին մէջ... իրարու կը նայինք զարմանալի եւ խորաթափանց նայուածքով եւ կարծես կ'ուզենք խօսիլ մինչ Սօֆի կը մօտենայ պատկերի մը: Բայց բառերը դժուարաւ

կը հասնին մեր շրթներուն, անոնք չեն ձեւակերպուիր այնպէս ինչպէս կը բղխին ու բռնագբօսիկ բան մը կայ մեր փոխադարձ վերաբերմունքին մէջ:

Կեցած ենք իմ ինքնանկար պատկերիս առաջ, եւ ես մտատանջ եմ, գո՞հ է թէ դժգոհ: Ինչո՞ւ ինձ կը նայի այդպէս խոր եւ յուզուած նայուածքով մը: Դիմացը պատին երկայնքին դէպի բազմոցը կ'երթանք ու կը նստինք քով քովի:

Տիկին... ես չեմ ուզեր խօսել թելադրուած միմիայն սիրալիր քաղաքավարութենէ. ես եկայ դէպի ձեզ, եկայ տեսնելու ձեր գործը անորոշ զգացումով...

Միրտս կարծես սեղմուած է ամուր ձեռքի մը մէջ ու երեսներս կ'այրին տենդով:

Ձեր մասին լսած էի վաղուց եւ այս վերջին օրերը յաճախ ձեր գործին ու ձեր անձին վրայ խօսեցան ինձ... բայց...

Կարծես ուրիշ արեւ մը կը լուսատրէ սրահը, կարծես տարբեր մթնոլորդի մը մէջ ենք ու անձկագին անհամբերութեամբ կը լսեմ իր ձայնը:

Յուզումով, թէեւ առանց հապճեպի եւ առանց շփոթութեան անիկա կը շարունակէ:

Ու ինչ որ տեսայ ձեր մօտ, ինչ որ զգացի, կը գերազանցէ իմ բոլոր ակնկալութիւններս:

Տիրան պէյ, կ'արտասանեմ յանկարծ, զարմացած ձայնիս անսովոր թրթռացումէն, ձեր հաւանութեան մասնաւոր կերպով զգայուն եմ:

Կը դառնամ իրեն ու դարձեալ իրարու կը նայինք երկար եւ խոր նայուածքով մը: Տեսակ մը աննկարագրելի բան կայ այդ մեր նայուածքին մէջ. կարծես աւելի խոր բան մը, աւելի հոգեկան իսկութիւն մը հաղորդակցութեան կը մտնեն իրարու հետ:

Յետոյ աւելի հանդարտ եւ մեթոտով կը խօսի իր տպաւորութեան մասին: Առաջին անգամն է որ Կ. Պօլիս գալէս ի վեր իսկապէս նկարչական կիրթ ճաշակ ունեցող մարդու խօսք կը լսեմ: Իր գնահատութիւնը յստակ է եւ խորաթափանց:

Կարծէք թէ ընտանի էք նկարչական արուեստին:

Ես ինքս երբէք չեմ նկարած բայց շատ կը սիրեմ նկարչութիւնը: Բիզանդական եկեղեցական պատկերներու հաւաքածոյ մը կազմեր եմ մեծ խնամքով եւ սիրով եթէ պատիւ ընէք մեզ մօտ հիւր գալու, հաճոյքը կունենամ ձեզ ցոյց տալու իմ փոքրիկ թանգարանս:

Մեծ հաճոյքով, Տիրան պէյ:

Սօֆիին ծիծաղը մեզ կ'սթափեցնէ. կը դառնանք իր կողմ. պատուհանէն դուրս կախուած կը խնդայ շեմ գիտեր ի'նչ բանի մասին: Ժամը յառաջացած է եւ լոյսը կը նուագի սրահին մէջ: Մօտակայ պարտէզի մը ծառերուն սօսաւիւնը կը բարձրանայ դէպի մեզ, շրթներուս վրայ օրը ծանրաբեռն է բուրմունքով ու կարծես ամենագոր գեղեցկութեան մը ցրի տարերը ամէն կողմերէ կը դիմեն դէպ հոգիս զարդարելու համար իմ կեանքի այս ժամը:

Ձեր արուեստին մէջ ունիք գուսպ ուժ եւ ինացականութիւն:

Օ'հ Տիրան պէյ...

Ու կարծէք կնոջ ձեռք չէ որ բռնած է ձեր վրձինը... ձեր պատկերը, օրինակի համար... միայն մարդը կարող էր գայն նկարել այդպէս... դժուար է առ այժմ բանաձեւել իմ զգացումս ու մտածումս բայց այդ պարզ է. միայն մարդը կարող էր նկարել կինը իր ամենէն յուզումնալի, իր գերագրգռուած տպաւորութիւններու ազդեցութեան տակ:

Տիրան պէյ... ես պիտի ուզէի ուրիշ ատեն եւս եւ աւելի երկար խօսել ձեզ հետ արուեստի մասին. ես պիտի ուզէի այս առաջին տպաւորութեան ազդեցութենէն ազատուած, աւելի խիստ քննութեան ենթարկել իմ գործս ձեզ հետ: Ոչ որ ինձ խօսած է այնպէս ինչպէս դուք... ես ինքս այս պահուս շեմ կարող իմ միտքս յստակ կերպով արտայայտել:

Յանկարծ գլուխս բարձրացուցի եւ իրեն նայեցայ:

Աւելի ներգոր գգացումով մը պատասխանեց իմ նայուածքիս ու շրթներուն վրայէն տեսայ որ սարսուռ մը անցաւ. խօսքեր որ անցան առանց արտաբերուելու:

Սօֆի եկաւ մեզ մօտ ընդհատելով մեր խօսակցութիւնը: Անիկա կեցաւ պահ մը ու հեզնութեամբ ժպտելով նայեցաւ մէկ ինձ մէկ Տիրան պէյին... յետոյ յանկարծ մեր դիմացը կանգնած, պատկերին նայելով ըսաւ:

Ինչպէ՛ս լաւ է, լաւ է, չէ՞, Տիրան պէյ... Ես կը կարծեմ թէ Էմմային ամենէն յաջող պատկերն է:

Լաւ է, կրկնեց Տիրան պէյ եւ զարմանալի է. կարծես այդ աչքերը, այդ դիմագիծը... այդ սիլուէթը անծանօթ չէ ինձ...:

Սօֆիին հետ հիւրս առաջնորդեցի մինչեւ դուռը: Պարտէզին ցանկապատէն անդին վարդենիներու շուքին մէջ անգամ մըն ալ Տիրան պէյ դարձաւ մեզի եւ երկուքս բարեւեց կառք նստելէ առաջ: Սօֆիին հետ իջանք սանդուղներէն ու մտանք պարտէզ:

Էմմա, Էմմա, ըսաւ կատակով Սօֆի. Տիրան պէյը...

Չի շարունակեց բայց հասկցայ, իմ յուզումս իմաստ մը ստացաւ ինձ համար եւ ինքը չզիտցաւ որ այդ թոպէին իմ կեանքի ամենէն յուզումնալի, ամենէն գեղեցիկ ու տառապագին շրջաններէն մէկը կը բանար այդ խօսքերով:

Ամէն բան կ'անցնի, ամէն բան կը մարի, ու մեր փոխադարձ գգացումներն ալ չէին կարող իրենց վախճանին չի հասնիլ... Ո՞վ էր յանցաւոր: Ոչ ես եւ ոչ ինքը ապահովաբար... տեսողութիւնը մեր սիրոյն կախում ունէր իր առաջին թոպէէն ստացած մղումէն եւ անիկա դադրեցաւ այնպէս, առանց պատրուակի, քաղցր մրմունջի մը մէջ, ինչպէս զարմանային անձրեւի ծաղկազարդ ծառերու վրայ:

Ամիսներ, տարիներ անցեր են այլ եւս այս իրիկուն կը յիշեմ իր քաղցր եւ յուզուած դէմքը եւ գեղեցիկ գգացումին ճառագայթումը: Այդ օրերուն հոգիս գգացի ազատուած որովհետեւ այդ օրերուն միայն գգացի սերտ հաղորդակցութիւնը անսահմանին եւ անծանօթին հետ: Պահեր եղան որ անվերջ ժամանակներու

ցուրտ եւ գերագոյն զգացումը ներշնչեցին ինձ եւ նաեւ ժամեր տառապանքի ու ցաւի որ դարերու դանդաղութեամբ թաւալեցան: Բայց այդ բոլորը համարժէք են այլ եւս եւ նշանակութիւն ունին միայն իրենց բովանդակած յուզումի ուժգնութեամբը:

Այսօր երբ երանգապնակս ձեռք կ'առնեմ իմ ուրախութիւններս եւ տխրութիւններս կը վերադառնան ինձ եւ վրձինս կ'առաջնորդուի իմ ներքին զգացումներու յուզումովը: Ամէն օր եւ ամէն ժամ կրկին կապրիմ այդ անցեալ ժամերը եւ յաւերժութիւն կու տամ անոնց որ ժպիտով կամ արցունքով կը ներկայանան ինձ: Ու մարդիկ որ արուեստագէտի մը գործերուն առաջ կանգ կ'առնեն չեն կարող երեւակայել որ մենք ստիպուած ենք մոռցուած եւ անցեալ վիշտ մը հարիւր անգամ վերակենդանացնելու եւ հարիւր անգամ մեր սիրտը արհնելու որպէս զի անոր կենդանի եւ ներկայ տպաւորութեան կարենանք հաղորդակից ընել անցնող գորշ եւ անտարբեր ամբոխը:

Եռոտանիս առաջ կեցած, ճերմակ կտաւիս դիմաց ի գուր կը ջանամ մտքովս սեւեռել տեսիլքը այն ժամուն որ խուսափուկ գիծերով կը ներկայանայ ինձ: Յիշողութիւնները կը խուժեն դէպի հոգիս դղրդելով անոր անշարժութիւնը... իմ նախկին մտորումներս եւ մտքի տանջանքներս անհետացած են կարծես: Հոգիս արքայալ կարծեց գտնել իր լայն հորիզոնները որովհետեւ ուրախութիւնը եւ վիշտը պահ մը բոլոր փակ դռները բացին իր անհանգիստ եւ անձկալի անհամբերութեանը առաջ:

Բայց այսօր ահա կրկին իմ վրձինս կը վարանի կտաւին վրայ... եւ կը զգամ որ կը վերադառնամ իմ ներքին բանդիս որը միմիայն զարդարուած է այլ եւս յիշողութիւններով եւ ցանկութիւններով:

Աւելի լաւ է թողում ամէն ինչ եւ երթամ Տիկին Դանիէլեանի այցելութեան ուր եւ կարող եմ հանդիպիլ Հրանդ Չերքեզեանին... Թերեւս իր խիստ եւ յանդիմանող նայուածքը մեղմանայ երբ իմ աչքերուս մէջ տեսնէ կարօտը նոր գարուններու, կարօտը կեանքին որուն լոյսով եւ մրուրով խառն ալիքը կը բարձրանայ շուրջս... Թերեւս զգայ նաեւ որ հակառակ իմ յանձնապաստան առանձնութեանս, հակառակ այն հաւատքին որով կը կարծէի թէ առած եմ իմ ազատութեան թռիչքս, եւ որը ինձ կը հեռացնէր իրենցմէ, դարձեալ եւ միշտ արքայի ընկերներ

ենք, բանդարկեալ մեր կառուցած ներքին բանդերուն մէջ եւ խիստ բանդապահներ իրարու:

Յետ միջօրէի արեւը կ'իջնէ հորիզոնին վրայ իր ջերմութիւնը մեղմացնելով. հեռաւոր հովիտներէն հովիտի մը սրինգը կը հնչէ. վարդագոյն ամպի ծուէններ արագութեամբ կ'անցնին երկնքի վրայէն: Աւելի լաւ է մնամ մինակ եւ լսեմ իմ հոգիիս մրմունջները. երթամ պարտէզին խորքերը, ծաղկած կեռասենիներու ներքեւ որոնց ճերմակ թերթիկները այնքան գեղեցիկ ժամերու մէջ անձրեւեցին մեր վրայ: